№ 88 ՈՒՐԲԱԹ, 27 ԱՊՐԻԼԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 27 ԱՊՐԻԼԻ № 88

Տարեկան գինը 10 ռուբլի. Կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.

Մայիսի 1-ից մինչև յունիսի 1-ը 85 կոպ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՈՊՈԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Գոլ. պր. 21, տուն Արտիստական Ընկ., տելեֆոն № 355.
Պահեստում միշտ կան մեծ քանակութեամբ բոլոր պաստառներ ամենավերջին ստիլով,
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր ռուլօն։ Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում։
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ։
(Ե.ու.) առ. 154. 50—14

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ
Ա. Ե. Ա. Մ. ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ ՄԻՋՈՑՆԵՐ, ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԵԱՏԻԳՈՐՍԿ.—Սէզօնը մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը։ ԾԾՄԲԱՅԻՆ ՋՐԵՐ յօդացաւի, սիֆիլիսի, կաթուածի կաշուի և այլ հիւանդութիւնների դէմ։ ԵՍՍԵՆՏՈՒԿԻ.—Սէզօնը մայիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը։ ԱԼԿԱԼԵԱՆ ՋՐԵՐ մարսողութեան խանգարման, ստամոքսադուլի և աղիքացաւի, լեարդային հիւանդութիւնների և այլոց դէմ։ ԺԵԼԷԶՆՈՎՈԴՍԿ.—Սէզօնը մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը։ ՀՈՂԱՅԻՆ ՋՈՒՐ արեան պակասութեան, կանանց զանազան հիւանդութիւնների, երիկամունքային և լեարդային հիւ. դէմ և այլն։ ԿԻՍԼՈՎՈԴՍԿ.—Սէզօնը յունիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը։ ԱԾԽԱԹԹՈՒՏԱՅԻՆ ՋՐԵՐ ուժասպառութեան, ստամոքսային մի քանի հիւանդութիւնների, ջղային, կանացի և այլ հիւանդութիւնների դէմ։

Ջրեր՝ վաննաների եւ խմելու համար, գիդրօպատիկ հիմնարկութիւններ, ցեխաբուժութիւն, բժշկութիւն ինգալեացիաներով, Նարզանի ածխաթթուտային գազով. կումիս, կեֆիր, մասսաժ, էլեքտր. և լուսաբուժութիւն, արեգակնային վաննաներ, բժշկական մարմնամարզութիւն ըստ Ցանդէրի, ռենդգէնօսկոպիա և ռենդգէնոտէրապիա, բաղնիս։ Զանազան մասնագէտ-բժիշկներ (մօտ 800)։ Եկւորները 40,000 հոգուց աւելի։ Էլեքտրաքարշ և լուսաւորութիւն, սանատորիաներ, բուժարաններ, հիւրանոցներ, կաֆէներ, ճաշարաններ, ընթերցարաններ, ճեմելիքներ, ծաղկանոցներ, հրապարակներ՝ մանկական խաղերի համար, զբօսանքներ, լեռնային էկսկուրսիաներ, թատրոններ, սիմֆօնիական երաժշտախմբեր։ Մանրամասն տեղեկութիւնները ուղեցոյց-գրքի և յատուկ բրօշիւրների մէջ։

Տեղեկութիւնների համար դիմել՝ въ Управленіе водъ въ Пятигорскѣ. (18,27) առ. 224. 3—3

ԲԱՌԱՍՆԱՄԵԱԿ „ՄՇԱԿ“ ԼՐԱԳՐԻ
ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՄՇԱԿԻ“ ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԱԼՄԱՆԱԽԻ

Բացառիկ ստուար № «Տարազի», որ լոյս է տեսնելու «ՄՇԱԿԻ» ՅՕԲԵԼԵԱՆԻ նախօրեակին։

Այս հոյակապ հանդէսը բաժանված է 10 շրջանի։ I. «ՄՇԱԿԸ» 1872 թւին։ «ՄՇԱԿԻ» առաջին ամբողջ №-ը fac-similé. Գրիգոր Արծրունին և իր աշխատակիցները, խմբագրական կազմը։ Կուլիսների ետև (պատմութեան այժմս սեփականութիւն)։ II. «ՄՇԱԿԸ» 1872—1877 թ., III. «ՄՇԱԿԸ» 1878—1882 թ., IV. «ՄՇԱԿԸ» 1883—1887 թ., V. «ՄՇԱԿԸ» 1888—1892 թ., VI. «ՄՇԱԿԸ» 1893—1897 թ., VII. «ՄՇԱԿԸ» 1898-1902 թ., VIII. «ՄՇԱԿԸ» 1903—1907 թ., IX. «ՄՇԱԿԸ» 1908—1912 թ., X. ՓԱՅԼՈՒՆ ՅՕԲԵԼԵԱՐ «ՄՇԱԿԸ»։

Կենսագրական «ՄՇԱԿԻ» (ժամանակագրական)։ Ընդհանուր հայեացք։ «ՄՇԱԿԸ» և Թիւրքահայոց հարցը։ «ՄՇԱԿԸ» և կանանց խնդիրը։ «ՄՇԱԿԸ» և հիւղը։ «ՄՇԱԿԸ» և քաղաքը։ «ՄՇԱԿԸ» և եկեղեցին ու կրօնը։ «ՄՇԱԿԸ» և այլադաւան հայերը։ «ՄՇԱԿԸ» և մեր այլացեղ, այլազգի դրացիները։ «ՄՇԱԿԸ» և Կովկասը։ «ՄՇԱԿԸ» և Ռուսաստանը։ «ՄՇԱԿԸ» և Եւրոպան։ «ՄՇԱԿԸ» և պարսկահայը, Թիւրքահայը։ «ՄՇԱԿԸ» և հայկական գաղութները։ «ՄՇԱԿԸ» և դպրոցը, գրականութիւնն ու մամուլը։ «ՄՇԱԿԸ» և արուեստները՝ թատրոն, երաժշտութիւն, նկարչութիւն և այլն։ «ՄՇԱԿԸ» և աղէտները՝ սով, ժանտախտ, հրդեհ, կոտորած։ «ՄՇԱԿԸ» և բարեգործութիւնն ու ինքնօգնութիւնը։ «ՄՇԱԿԸ» և ազատութիւնը։ «ՄՇԱԿԸ» և աշխատանքը։ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ և յեղափոխութիւնը։ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ և ՐԱՖՖԻՆ։ «ՄՇԱԿԸ» և իր ոյժը, նշանակութիւնը, դիրքը, կատարած դերը։

Յիշողութիւններ։ Էպիզօդներ։ Առասպելներ, ինսինուացիաներ «ՄՇԱԿԻ» մասին։ Եզրակացութիւն։ Մտքի յաղթանակը։ Փայլուն յօբելեար «ՄՇԱԿԸ»։

ԱՆՀԱՄԱՐ ՆԿԱՐՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ, որոնց մի մասը տպագրվում է արտասահմանում։ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ՐԱՖՖՈՒ և «ՄՇԱԿԻ» այժմեան ղեկավարների մեծադիր գոյնզգոյն պատկերները՝ տպագրված ընտիր. կարելի է գնել և շրջանակների մէջ։

Քառասնամեայ „ՄՇԱԿԻ“ աշխատակիցների, մշտական և յատուկ թղթակիցների պատկերները։

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վերջին լուսանկարը՝ խմբանկար, լուսանկարված մահից մի քանի ամիս առաջ և սեփականութիւն «ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ», դեռ ոչ մի անգամ չը տպագրված։ Fac-similé-ներ Գրիգոր Արծրունու, Րաֆֆու, Հայկակի, և այլն, և այլն։ «ՄՇԱԿԻ» արդի խմբագրատունն ու խմբագրութիւնը։ «ՄՇԱԿԻ» յօբելեանական յանձնաժողովի և արդի աշխատակիցների, թղթակիցների խմբանկարները, և այլն, և այլն։

Բաժանորդագինը

„ՄՇԱԿԻ“ ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼՄԱՆԱԽԻ

մինչև ներկայ ապրիլի 15-ը «ՄՇԱԿԻ» բաժանորդների համար ՄԷԿ ռուբլի, այնուհետև մինչև մայիսի 20-ը՝ ԵՐԿՈՒ ռուբլի, իսկ լոյս տեսնելուց յետոյ՝ ԵՐԵՔ ռուբլի։ Նրանք, որոնք բաժանորդ չեն «ՄՇԱԿԻՆ», վճարում են 50 կ. աւելի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդների համար մինչև մայիսի 20-ը 10 ֆր.։ Կը ստանան յատուկ խողովակների մէջ։

Մէլօվի ամենաընտիր թղթի վրա հատը 10 ր. (25 ֆր.)։ Տպվելու են շատ սահմանափակ օրինակներ։

Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում։
Դիմել՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ, Головинскій пр., 41.
Արտասահմանից՝ DIRECTION TARAZ, TIFLIS. 26. 0—7

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

ԱՅՍՕՐ, ուրբաթ, ապրիլի 27-ին հերթական jour-fixe-ը նուիրված է յաւերժայիշատակ ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻՆ։ Ցանկալի է, որ հիւրերը շնորհ բերեն դրամատուրգի ստեղծագործած հերոսների զգեստներով։

Մուտքը անուանական հրաւիրատոմսերով։

Կողմնակի անձինք մինչև ուրբաթ կէսօր ձեռք բերելով ՏԱՐԱԶԻ Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ԱԼՄԱՆԱԽԸ, որ լոյս տեսաւ այսօր, կը ստանան և մուտքի տոմս՝ երեկոյեան հանդէսին ներկայ լինելու համար։

Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին։ 26. 2—2

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Համայի Մայախարթիրը
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կոպ.
Այս գրքի վաճառումից գոյացած գումարը յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆօնդին։
Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ“, կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak“,

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. (երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(Կ.չ.ու.). առ. 179. 100—15

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

I

Տարօրինակ կացութիւն է ստեղծվել Թիւրքիայի հայութեան համար։

Այդ հայութիւնը, իբրև օսմ. կայսրութիւնը կազմող ազգութիւններից մինը, պէտք է ունենայ իր ներկայացուցիչները օսմ. պարլամենտի կամ Մէբուսանի մէջ։

Եւ սակայն թէև ընտրված են 12—13 հայ երեսփոխաններ կամ մէբուսներ, բայց նրանք Թիւրքիայի հայութեան ներկայացուցիչները չեն և չեն էլ կարող համարվել։ Այդ երեսփոխաններին չէ ընտրել Թիւրքիայի հայութեան կամքը, քուէն, այլ ընտրել է Իթթիհադի կամքը և քուէն։

Հետևաբար այդ երեսփոխանները, չը լինելով հայ ժողովրդի ընտրեալը, չեն կարող և լինել այտայայտիչ նրա կարիքների, պահանջների, չեն կարող ունենալ որոշ ծրագիր ազգային շահերի և իրաւունքների պաշտպանութեան համար, այլ պէտք է ղեկավարվեն իրանց ընտրել տուող Իթթիհադի կամ իրանց կուսակցական նեղ ծրագրով։

Իսկ թէ Իթթիհադի ծրագիրը որքան նպաստաւոր է մասնաւորապէս հայերի և ընդհանրապէս Թիւրքիայի քրիստոնեայ ազգութիւնների համար, այդ տեսան մեր ընթերցողները նրա այն գաղտնի ծրագրից, որ տպվեց «Մշակի» մէջ։

Մի այլ յօդուածից, որ շուտով կը տպվի նոյնպէս «Մշակի» մէջ, ընթերցողները կը տեսնեն, որ Իթթիհադի վարչութեան օրով հայերը ոչ մի օգուտ չունենալուց բացի, մեծապէս տուժեցին և տուժելու են, որովհետև Իթթիհադը, որի հետ դաշնակցել և միացել է «Դաշնակցութիւն» կոչված կուսակցութիւնը, ձգտում է շարունակ ջնջել ազգային շատ իրաւունքներ, առանձնաշնորհութիւններ և մանաւանդ ի չիք դարձնել հայոց ազգային սահմանադրութեան և ազգային երեսփոխանական ժողովի նշանակութիւնը և նոյնիսկ գոյութիւնը։

Քաղաքական դրութիւնը այնպէս է Թիւրքիայում, որ քրիստոնեայ և այլ բոլոր մանր ազգութիւնները՝ հայեր, յոյներ, բօլգարներ, ասորիներ, հրէաներ և այլք, որոնք դարերից ի վեր ունեն ազգային յատուկ իրաւունքներ և առանձնաշնորհութիւններ և իրանց ներքին, ազգային գործերի վերաբերմամբ վայելում են ինքնավարութիւն, պէտք է միանան և իբրև ընդդիմադրական տարր հանդէս գան օսմ. պարլամենտում, քանի որ այդ պարլամենտի մէջ մեծամասնութիւնը կազմում են երիտասարդ-թիւրքերը կամ իթթիհադականները, որոնք ձգտում են ոչնչացնել, ջնջել այդ ներքին ինքնավարութիւնը, որ նոյնիսկ բռնակալ Համիդները զգուշացան ջնջել։

Երբ օսմ. պարլամենտի նոր ընտրութիւն նշանակվեց, Կ. Պօլսի հայ մամուլը և ազգային ղեկավար շրջանները այն արդարացի միտքը յայտնեցին, թէ հայ ազգի ներկայացուցիչները կամ երեսփոխանները պէտք է լինեն համայն հայ ազգի ընտրեալները և ոչ այս կամ այն քաղաքական կուսակցութեան ընտրեալները, թէ հայոց պատրիարքարանը և ազգային ժողովը պէտք է ղեկավարեն հայ երեսփոխանների ընտրութիւնը և նրանք պէտք է բանակցութիւններ վարեն, համաձայնութիւն կայացնեն իշխող Իթթիհադեան կուսակցութեան կամ օսմ. կառավարութեան հետ հայ երեսփոխանների թւի, ընտրութեան և կանդիդատների մասին։

Սակայն «Դաշնակցութիւն» կոչված կուսակցութիւնը կանխել էր և՝ ներկայացնելով իրան Իթթիհադի առաջ իբրև ամբողջ հայ ժողովրդի ներկայացուցիչ՝ պայմանաւորվել էր երեսփոխան ընտրել տալ դաշնակցական կանդիդատներին։ Նրա այդ վարմունքը ընդհանուր դժգոհութիւն առաջ բերելով, նա ստիպված տեսաւ իրան ընդունել առաջարկը՝ կազմել համերաշխական ժողով և ընդհանուր համաձայնութեամբ որոշել կանդիդատներ երեսփոխանութեան համար։ Սակայն, ինչպէս տեսանք Կ. Պօլսի մեր թղթակցի նամակներից, «Դաշնակցութիւնը» դրժեց համերաշխութեան խոստման, և նոյնիսկ Մինաս Չերազ, որ առաջարկվում էր իբրև հայ ազգի մեծամասնութեան ընտրելին, ոչ մի տեղից երեսփոխան չընտրվեց։

Եւ այսօր հայ ազգը Թիւրքիայում չէ կարող ասել, թէ նա ունի իր ներկայացուցիչները օսմ. պարլամենտում։

Իսկ մի անգամ որ նա չունի իր օրինաւոր ներկայացուցիչները օսմ. պարլամենտում, հայ ազգի իրաւունքները և շահերն ևս զրկված են պաշտպանութիւնից, քանի որ եղած երեսփոխանները, իբրև կուսակցականներ, կը պաշտպանեն միայն իրանց պատկանած կուսակցութեան շահերը և իրաւունքները, որ կարող են չը լինել, և չեն ևս, ոչ միայն համաձայն հայ ժողովրդի շահերին և իրաւունքներին, այլ և միանգամայն հակառակ նրանց։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 ապրիլի

Լիվադիա (Պաշտօնական).— Կայսերական պալատի մինիստրի հաղորդում.

«Երէկ Լիվադիայում Թագաւոր Կայսրը բարեհաճեց ընդունել Եալթա եկած բուլղարական արտակարգ պատուիրակութիւնը, որի անդամներն են ազգային ժողովի նախագահ Դանեւը, [illegible] Մարկովը, [illegible] և արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեայ Միչէվը։

«Պատուիրակութիւնը պալատում ընդունւում էր պալատի մինիստր բարոն Ֆրեդերիկսը, հոֆմարշալ կոմս Բենկենդորֆը, [illegible] Սոուխոցկին և հերթապահ ֆլիգել-ադյուտանտ [illegible]։

«Երեկոյեան ժամը 7½-ին Դանեւը [illegible] ժամը 8-ին, պալատի մեծ ճաշասենեակում, Բարձրագոյն ներկայութեամբ կայացաւ ճաշ 34 հոգու համար։ Կենտրոնական տեղը գրաւել էր Կայսրը, որ կրում էր Կիրիլ և Մեֆօդի շքանշանի ժապաւէնը։ Ճաշին ներկայ էին նաև Լիվադիայում գտնվող մինիստրները և այլ բարձրաստիճան պաշտօնեաները»։

—

Մոսկվա.—Գործադուլ դերձակները փորձեցին ցոյցով անցնել Լուբեանսկայա հրապարակով և Կուզնեցկի կամուրջով, բայց ոստիկանութիւնը ցրեց նրանց։ Կալանաւորվեցին 15 դերձակ։ Ցոյցը Լէնայի դէպքերի առիթով էր։

—

Պարիզ.—Լէյխտենբերգի դուքս իշխան Գէորգի Ռոմանովսկիի դիակը փոխադրվեց կայարան՝ Ռուսաստան ուղարկելու համար։ Դագաղի վրա պսակներ են դրված Նոցին Մեծութիւնների, ֆրանսիական հանրապետութեան նախագահի, իտալական Թագաւորի կողմից։ Սգակառքին հետևում էին Պարիզ եկած Մեծ Իշխանուհիները և Մեծ Իշխանները։

Եթէ նոր զօրքերը Մարօկկօ հասնեն, այն ժամանակ Ֆրանսիան Մարօկկօյում կունենայ 43,000 զինուոր։

—

Վիեննա.—Պաշտօնական մամուլը հաղորդում է, որ կայսրը երկամեայ ընդմիջումից յետոյ կը մասնակցէ Քրիստոսի Մարմնի տեղափոխութեան։ Այդ նշան է, որ կայսրը առողջ է ու առոյգ։

—

Վէյմուտ.—Եկաւ Գէորգ Թագաւորը և ստանձնեց նոր եղանակով ծովային վարժութիւններ կատարելու ընդհանուր հրամանատարութիւնը։

—

Կորֆու.—Վիլհելմ կայսրը աղջկայ և Աւգուստ պրինցի հետ «Հօհէնցօլերնով» մեկնեց Գենուա։

—

Բերլին.—Հաստատվում է այն տեղեկութիւնը, որ Մարշալ-ֆօն-Բիբերշտէյնը դեսպան է նշանակվում Լոնդոնում։ Մատնանշում են, որ կանցլէրը Անգլիայի հետ կապված վերջնական համաձայնութիւնը համարում է քաղաքականութեան ամենագլխաւոր խնդիրը. դէպի Թիւրքիան եղած վերաբերմունքը երկրորդական նշանակութիւն է ստանում Անգլիայի հետ սկսված յարաբերութիւնների առաջ։ Բացի դրանից՝ առաջինը այն աստիճան հաստատուն է, որ այժմ հնարաւոր է առանց վնասի տալ ներկայացուցչութիւնը Կ. Պօլսում երիտասարդ դիպլոմատի։ Անգլիայի հետ համաձայնութիւնը կը ծառայէ աւելի ևս յետագայ ամրապնդման թիւրք-գերմանական յարաբերութիւնների։

—

Թաւրիզ.—Զէնջան եկած կառավարական զօրամասը Զէհանշահ-խան Եմիր-Ավշարի հրամանատարութեամբ՝ շտապով յետ կանչվեց Ղազվին, որովհետև տեղեկութիւն է ստացվել, թէ կառավարական զօրքերը գլխովին պարտութիւն են կրել Կորվէի մօտերը Սալար-ուդ-Դովլէի առաջընթաց գնդերից։ Զէնջանը նորից ազատ մնաց Սալարի [illegible] համար։

—

Բաթոն-Րուժ (Լուիզիանա նահ.).— Միսիսիպի ամբարտակի փլման պատճառով խեղդուեցին 17 մարդ։

Թեմիր-Խան-Շուրա, 25 ապրիլի

Ցուցահանդէսում առաջարկվեցին բազմաթիւ [illegible]

[illegible]

Այսօր մեկնեց [illegible]. Վաղը

մեկնում են աւագ մասնագէտներ Ալ. Քալանթարն ու Ց. Փիրալեանը: Վաղը մեկնելու է նաև սենատոր Է. Վատացին: («Кавк.»)

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 ապրիլի

Կաշգար.—Ոչտուրֆանի և Կուչարի գաւառապետները, վախեցած Ակսում և Կարաշարում տեղի ունեցող դէպքերից, պաշտպանութիւն ու ապաստան են որոնում ռուս առևտրականների մօտ:

Խոտանի կուսակցութիւնը տեղիս դաօտայ Խանխունինից խնդրում է չը հրաժարվել նշանակելու նրան Սինցզեանի նահանգապետ:

—

Լոնդոն. — Հնդկաստանի գործերի ստատս-սեկրէտարի օգնականը յայտնեց համայնքների պալատում, որ Տիբէտից ստացված տեղեկութիւնների համաձայն՝ Լհասսայում չին-տիբէտական ճակատամարտը շարունակվում է. տիբէտցիները կորցրին 900, չինացիք 300, սպանված լուրերի համաձայն 1000 չինացիք շրջապատված են 20,000 տիբէտցիներով:

Չինական զօրքերը գրաւել են դալայ-լամայի եղբօր տունը և գերել են նրա կնոջը և զաւակներին:

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 ապրիլի

Կ. Պոլիս.—Բօղոսի զօրագունդը շարունակում է ցոյց տալ ընդդիմադրութիւն:

Ներքին գործերի մինիստրը հեռագրում է, որ մեկնեց Դիբր:

—

Հռոմ.—Սենատը ընդունեց ծովային մինիստրութեան նախահաշիւը: Սենատոր Թինալին ողջունեց նաւատորմին:

Ստեֆանին հաղորդում է Բօղոսից, որ գեներալ Ամէլիօն երէկ ընդունեց զանազան հիւպատոսների և իշխանութեան ներկայացուցիչների:

«Մ. և Ա.» կոմիտէտը ազատել է 30 յանցագործների բանտից այն գիշերը, որի առաւօտեան իտալացիք գրաւեցին քաղաքը:

—

Օդեսսա.—Բորսայի կոմիտէտը, նկատելով որ ինչպէս շոգենաւերը չեն կարողանում անցնել Դարդանէլով և որ անհնարին է ճշգրտօրէն նախատեսել բացման ժամանակը, միջնորդութիւն յարուցեց արտաքին գործերի և առևտրի մինիստրների առաջ՝ ուշադրութիւն դարձնել ամբողջ հացային առևտրի, արդիւնաբերութեան և բանւորների աղքատ վիճակի վրա:

—

Բօղոս.—Իտալական մի հակատականաւ Լինդօս նաւահանգստում գերեց Բօղոսի վալիին և նրա երկու քարտուղարներին այն րօպէին, երբ նրանք կամենում էին հեռանալ կղզուց: Իտալական առաջընթաց զօրամասին անձնատուր եղան 4 թիւրք օֆիցէր և 28 զինւոր:

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Վան, 10 ապրիլի

Երբ 10 օր առաջ քաղաքիս փողոցներից մէկում գործվեց մի սպանութիւն, որ բաւական մեծ տագնապի մատնեց քաղաքիս հայ ազգաբնակութիւնը, իսկ թիւրքերին՝ գրգռութեան հայերի դէմ: Անցեալ աշնանը Հայոց-Ձոր գաւառի Քերծ հայաբնակ գիւղի շրջակայքում, անյայտ չարագործների կողմից, սպանվել էին հալէպցի երեք թիւրքեր, որոնք այն կողմերում ոչխարներ էին գնում, սիրիական քաղաքներ փոխադրելու համար: Կառավարութիւնը այդ սպանութեան գործում ամբաստանեց Դաշնակցութեան զինւոր բօլգարացի Սարգսին, որ այդ օրը, սպանութիւնը գործվելուց միերկու ժամ առաջ, այդտեղից անցել էր 8—10 զինված մարդկանցով, թէև ամբաստանութեան ուրիշ ոչ մէկ լուրջ հիմք չը կար: Դատարանը կոչնագիր ուղարկեց Սարգսին, սակայն նա չը ներկայացաւ, ուստի նրա դէմ արձակվեց կալանաւորման հրամանագիր: Մարտի 28-ին՝ մի խումբ ոստիկաններ ուզում են գործադրել այդ հրամանը, բայց նա դրանց վրա ատրճանակից կրակում է, սպանում է ոստիկաններից մէկին և առաջ եկած շփոթութիւնից օգուտ քաղելով, մանաւանդ որ ոստիկաններն էլ անզէն են լինում, փախչում է: Այդ գիշերը կառավարութիւնն հարիւրաւոր ոստիկաններ և զինւորներ ուղարկեց Սարգսին ձերբակալելու կամ թիւրքերի կողմից հաւանական կարծված որևէ շփոթութիւն արգելելու, որովհետև սրանց կողմից խիստ պահանջ էր եղել Սարգսին և դաշնակցական մի քանի պետերի ձերբակալելու ու երկրից արտաքսելու վերջիններին, բայց ոչ մի դէպք չը պատահեց բարեբախտաբար:

Աւելի լուրջ տագնապ առաջ եկաւ յաջորդ օրն, երբ սպանված ոստիկանին մեծ փառաւորութեամբ ու հանդէսով թաղեցին՝ վալի Իսմայիլ Հակկը-բէյի նախագահութեամբ, կառավարութեան բոլոր պաշտօնեաների և հազարաւոր թիւրք ժողովրդի ներկայութեամբ, որոնք դիակը ուսերի վրա էին կրում մի ժամից աւելի ճանապարհի հեռաւորութեան վրա: Սա արդէն հայերի դէմ մի ցոյց էր, բայց բարեբախտաբար մի որևէ դէպք տեղի չունեցաւ, թէև գրգռութիւնը թիւրքերի մէջ ծայր աստիճանի էր հասել, որովհետև վալիին Կ. Պօլսից հրաման չուղարկվեց Սարգսին ձեռք բերելու նպատակով հայոց թաղերում խուզարկութիւններ սկսել, ինչպէս պահանջում էին թիւրքերը և ինչպէս վալին էլ Կ. Պօլսից հրաման էր խնդրել: Այս դէպքը թէև այս կերպ վերջացաւ, առանց մի ցաւալի ելքի, բայց առանց հետևանքի չի մնայ, ու երևում է, որ վերջ ի վերջոյ հաշւեյարդարութիւն է լինելու պատգամաւորի ընտրութեան ժամանակ. որովհետև այդ սպանութիւնը սառնութիւն է առաջ բերել հայ և թիւրք յարաբերութիւնների մէջ, մանաւանդ ընդդէմ Դաշնակցութեան: Մտրակ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 18 ապրիլի

Մեր թղթակցութիւններից յայտնի է «Մշակի» ընթերցողներին Ղարադաղի Քէյվան մահալի բազմաչարչար հայերի դատն ու պահանջը Քեարիմ-խանից, որ գտնվում է Թաւրիզում: Քէյվանի 5 գիւղերի հայերն հետզհետէ հասան Թաւրիզ Չիհանկիր-բէկի հետ: Մի քանի օր առաջ առաջնորդական փոխանորդ Կարապետ քահանայի առաջնորդութեամբ Չիհանկիր-բէկը և գիւղացիք ներկայացան Ռաշիդ-ուլ-Մուլքի նախագահութեամբ կազմված դատարանին, որտեղ ներկայ էր նաև գլխաւոր Քեարիմ-խանը: Փոխանորդ Կարապետ քահանայ Մանուկեան խիզախօրէն պաշտպանեց հայերի պահանջները՝ մէկիկ-մէկիկ թւելով Քեարիմ-խանի կատարած անհամար չարիքները հայերի գլխին և բռնութեամբ առած անիրաւացի տուգանքները: Խօսեց Չիհանկիր-բէկը, խօսեցին և հայ գիւղացիք՝ սիրտ առած փոխանորդ քահանայի աներկիւղ խօսակցութիւնից ու վարմունքից: «Այս անգութ զալըմը,—ցոյց տալով Քեարիմ-խանին ասում է Կարապետ քահանան,—Ղարադաղում տուն չը մնաց որ չայրէ, օջախ չը մնաց որ չը թալանէ. կեղեքումները, առևանգութիւններն ու յափշտակութիւնները չափից անց են կացել»: Քեարիմ-խանը լուռ լսում էր և մերթ ընդ մերթ միայն ընդմիջում թոյլ ու անզօր բացատրութիւններով: Ժողովը ընդունեց հայերի արդարացի պահանջը և որոշեց, որ առաջիկայից կայանալիք ժողովում վճռվի Քեարիմ-խանից պահանջվելիք գումարների չափը և այդ առիթով նրա ունենալիք վիճակը:

Հայերի պահանջների գործը պէտք է վճռվի սրբազան Թեմակալի, վաճառականապետ աղա Ջաքարիա Նազարբէկեանի, Թումանեանների Ղարադաղում ունեցած գիւղերի վերատեսուչ Ս. Յովնանեանի, որ երկու օր առաջ հասաւ Թաւրիզ, և մի երկու ուրիշ պատուաւոր հայերի մասնակցութեամբ և Սարդար-Ռաշիդ-ուլ-Մուլքի աջակցութեամբ: Դատապարտված Քեարիմ-խանը ամենայն կերպ տրամադրութիւն է ցոյց տալիս ենթարկվելու վերջիններիս վճռին, միայն թէ օր առաջ ազատվի ներկայ անձուկ վիճակից:

Հայ գիւղացիների պահանջը միայն 15,000 թումանը չէ, որ անցած տարի որոշված էր Քեարիմ-խանի վզին: Եթէ մի առ մի հաշւեն Քեարիմ-խանի և ընկեր խաների կատարած հարստահարութիւններն ու չէների այրումը հարիւր-հազարի կարող է հասնել նրա պարտքը: Այժմ կախված է տիրող իշխանութեան խղճից, թէ ի՛նչ չափով կը բաւականացնէ տանջված հայ գիւղացիներին: Գիւղացու աշխատանքի օրերն են. նրա մի րօպէի կորուստը անդարմանելի է. ցանկալի կը լինէր, որ վաղօրօք վերջանային սրանց գործերը, և գոհ սրտով դիմէին իրանց ընտանիքին ձեռնարկելով գիւղական աշխատանքի:

Քեարիմ-խանը Թաւրիզում ամեն մի վճռի հաւանութիւն և գլուխ ծռելու պատրաստ է. արդեօք Թաւրիզը կը դնէ նրան այն վիճակի մէջ, որ Ղարադաղում ևս լինի իր խոստումների մարդը և հայ գիւղացին վայելէ անդորր մի վիճակ:

Կախաղանն ու ձերբակալութիւնները չը վերջացան տակաւին Թաւրիզում: 4 օր առաջ նահանգապետ Շուջա-ուդ-Դօվլէի հրամանով Շէշգիլան թաղում կախաղան հանվեց Արդաբիլում ձերբակալված ձիաւորների մի պետ. իսկ մի օր առաջ Թաւրիզում ձերբակալվեց Հաջի Միրզա աղա Ցարչիբուշ հարուստ կալուածատէր վաճառականը, որն անցած տարի Թէհրանումն էր իբրև Թաւրիզի պատգամաւոր և որը, ինչ-ինչ կասկածների համար ձերբակալվելու երկիւղից, բաստ էր մտել օսմանեան հիւպատոսարանը:

Արդաբիլի շրջանում շահսէվանների շարժումը լուրջ հոգս է պատճառում Թաւրիզի նահանգական իշխանութեան: Անցած տարվայ կալանաւորները Թէհրանում, որոնք շահսէվանների գլխաւորներիցն էին, արձակվում են և ուղարկվում իրանց տեղերը: Եթէ հաւատանք տարածված լուրերին, դա կատարվում է Շուջա-ուդ-Դօվլէի գլուխը խառնելու համար: Նահանգապետը շահսէվանների շարժման դէմ կարևոր ուժեր ուղարկել է և դեռ ևս նոր ուժեր են պատրաստվում խլրտումները ճնշելու նպատակով:

Պարսից տէրութեան հասանելիք ցորենի ղալլայի գործը յանձնվեց բելգիացիներին, որոնք արդէն ընդունել են իրանց վրա այդ գործը: Մեծ յոյսեր կան, որ Ատրպատականում հացի անլուծելի կնճիռը բարեյաջող լուծումն ստանայ այսուհետև և ազգաբնակութիւնը ազատվի մի մեծ տագնապից:

Վերջին անգամ վերահաս սառնամանիքից ցրտահար եղած նուշի և ծիրանի վնասն Ատրպատականում հաշւում են մօտ 500,000 րուբլի: Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ»

—

Հայկական տխուր իրականութեան ցաւալի երևոյթներից մէկն էլ այն է, որ ամեն անգամ, երբ ձեռնարկվում է որևէ մի կուլտուրական, բարենպատակ գործի, միշտ գտնվում են մարդիկ, որոնք առանց ի մօտոյ ծանօթանալու գործի նպատակի և էութեան հետ՝ հանդէս են գալիս և աշխատում մի քար գլորել, մի խոչընդոտ յարուցանել բարի ձեռնարկութեան դէմ, քօղարկելով իրանց հանդէս գալը որևէ գաղափարական պատրուակով:

Հայ հասարակութիւնը գիտէ, որ «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը», որի կենտրոնը գտնվում է Եգիպտոսի Կահիրէ քաղաքում, վերջերս թոյլտւութիւն խնդրեց Կովկասի Փոխարքայից՝ բանալ Թիֆլիսում ճիւղ ամբողջ Կովկասի համար:

Ով ուսումնասիրել է այդ Միութեան կանոնադրութիւնը, ով հետևել է նրա համակրելի, զուտ քաղաքակրթական և որևէ քաղաքականութիւնից ու կուսակցութիւնից հեռու գործունէութեանը, ով կարդացել է նրա տեղեկագրերը, նա կը համոզվի, որ Միութիւնը պարտաւոր էր բանալ իր ճիւղը նաև Ռուսաստանի հայերի մէջ, և այդ ճիւղը մի անհրաժեշտ պահանջ է ներկայումս:

Բայց ով առանց ուսումնասիրելու գործը, առանց մանրամասնօրէն ծանօթ լինելու Միութեան գործունէութեան և նպատակների հետ, դրդված՝ լոկ անձնական նկատումներից, չար ու յետին մտքից, սրան և նրան ջուր գալու համար, վեր է կենում և քարեր գլորում, այդպիսին միայն ցոյց է տալիս իր բարոյական ֆիզիօնոմիայի տգեղութիւնը:

Եւ ահա այդպիսիներից մէկն է հանդիսանում ոմն Փ. (ինչ հարկ կար ծածկանունով հանդէս գալ), որ հանդէս է եկել «Հօրիզոնի» (ի հարկէ միայն «Հօրիզոնի») էջերում (№ 83) հետևեալ տողերով.

Առհասարակ եթէ մի որևէ տեղ ուզում են հիմնել բարեգործական կամ կուլտուրական որևէ հաստատութիւն, հիմնում են, երբ այդպիսի հիմնարկութեան կարիք է զգացվում, որովհետև դրանք առևտրական հիմնարկութիւններ չեն, որ կօնկուրենցիա անելու համար աշխատեն իրանց նմաններին տապալել: Ի նկատի ունենալով այս հանգամանքը, մեզ շատ զարմացնում է, թէ ինչ պատճառներից դրդված կամենում են Թիֆլիսում հիմնել մի ուրիշ բարեգործական ընկերութիւն, երբ 30 տարիների ընթացքում արդէն գոյութիւն ունի նոյն տիպի և նոյն նպատակներն ունեցող Կովկասի Հ. Բարեգ. Ընկերութիւնը:

Արդեօք այս դէպքում էլ, ինչպէս առհասարակ հայկական միւս ձեռնարկութիւնների մէջ, անձնականը որոշ դեր չէ խաղում, որը յաճախ մի երկու մարդու պատճառով վնասվում է հայութեան ամբողջ զանգուածը:

Ահա թէ ինչու մենք, իբրև հայ հասարակութեան մի մասնիկ, գուցէ մեզ հետ նաև շատերը, կը ցանկանայինք իմանալ, թէ ինչ պատճառներից կամ ինչ կարիքից ստիպված է հիմնվում այդ ընկերութիւնը, որպէսզի հասարակութիւնն էլ օր առաջ պատրաստվի գրկաբաց ընդունելու այդ ընկերութիւնը, որը մտադրվում է հիմնել նրա համար:

Եթէ հետևելու լինենք Փ.-ի տարօրինակ տրամաբանութեան, պէտք է հայ հասարակութիւնը 30 տարի առաջ պախարակէր բժ. Բ. Նաւասարդեանին, երբ սա ձեռնարկեց հիմնելու Կ. Հ. Բ. Ընկերութիւնը և ասէր նրան. «Ինչի՞ համար դուք հիմնում էք մի նոր բարեգործական ընկերութիւն, քանի որ գոյութիւն ունի Բագւի Մարդասիրական Ընկերութիւնը, որ նոյն տիպի և նոյն նպատակներն ունեցող ընկերութիւն է»: Եթէ հետևելու լինենք Փ.-ի անհեթեթ տրամաբանութեան, հայ հասարակութիւնը նոյն յանդիմանութիւնը պէտք է ուղղէր Կ. Խատիսեանին, երբ սա ձեռնարկեց հիմնել Կուլտուրական Միութիւնը, քանի որ արդէն գոյութիւն ունէին Մարդասիրական Ընկերութիւնը և Կ. Հ. Բ. Ընկ., նոյն տիպի և նոյն նպատակներն ունեցող ընկերութիւններ:

Բայց փառք Աստուծոյ, որ միայն Փ.-ն է այդպէս մտածում: Իսկ ես այժմ կը բացատրեմ նրան, թէ ի՛նչ պատճառներից կամ կարիքներից դրդված Եգիպտոսի Հայկական Բարեգ. Ընդհ. Միութիւնը կամենում է իր ճիւղն ունենալ Ռուսաստանում և թէ այդ ճիւղը բնաւ չէ կարող խանգարել կամ անդամալուծել Կ. Հ. Բ. Ընկ. գործունէութիւնը:

1) Հայկական Բարեգ. Ընդհ. Միութեան նպատակն է. «Ասիաբնակ հայ ժողովրդի մտաւոր և բարոյական զարգացմանը նպաստել, անոր նիւթական և տնտեսական կացութիւնը բարուոքելու աշխատիլ, զուտ մարդասիրական հողի վրայ, առանց ոևէ քաղաքական հանգամանք ունենալու»:

2) Կ. Հ. Բ. Ընկ. գործունէութիւնը սահմանափակված է միայն Կովկասով, հետևաբար, նա անկարող է հանդիսանալ բարեգործական և կուլտուրական օրգան Ասիայի հայութեան համար: Նա կարող է լրացնել միայն Եգիպտոսի Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան գործը, դառնալով նրան դաշնակից:

3) Ներկայումս չը կայ որևէ մի ազգային մարդասիրական և կուլտուրական հաստատութիւն, բացի Եգիպտոսի Հ. Բ. Ընդհ. Միութիւնից, որ մտածէր և հոգ տանէր Թիւրքահայաստանի թշուառ, տառապեալ, անտէր և անօգնական, լքեալ ժողովրդի մասին:

Երբ մի քանի տարի առաջ այդ ժողովուրդը սովամահ լինելու վտանգին էր ենթարկված, Կ. Հ. Բ. Ընկերութիւնը, ինչպէս և Բագւի Մարդասիրական և Կուլտուրական ընկերութիւնները անկարող հանդիսացան օգնութեան ձեռք կարկառել նրան, որովհետև չունէին ոչ իրաւունք իրանց կանոնադրութեամբ, ոչ ևս միջոցներ, և ամենայն հայոց կաթողիկոսը երկու անգամ ստիպվեց միջնորդել Փոխարքայի առաջ՝ հաստատելու մի յատուկ ժամանակաւոր հանգանակիչ մասնաժողով այդ նպատակի համար: Այդ մասնաժողովը կատարեց իր վրա դրված միսիան, բայց նա հնարաւորութիւն չունէր իր հանգանակած գումարները ինքը գործադրել, կօնտրօլ ունենալ նրանց գործա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՈՒԱՍՏԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(Նուէր «ՄՇԱԿԻՆ»՝ 40-ամեակի առիթով)

I

Փորձը բնական գիտութիւնների մէջ.—Նշանակութիւնը.—Փորձի կիրառումը կենսաբանական գիտութիւնների մէջ.—Պատուաստի գիտակցական փորձերի ժամանակը:

Փորձը, «էքսպերիմենտը» սկզբից ևեթ յատուկ է եղել իրական գիտութիւններին և նրանց հիմքը կազմել: Փորձի շնորհիւ է, որ բնական գիտութիւնները միւսների շարքում այնքան պատկառելի և գրաւիչ են դարձել ու բարձր դիրք գրաւել: Սակայն մինչդեռ այդ գիտութիւնների՝ անկենդան բնութեան վերաբերեալ մասը —ֆիզիկան ու քիմիան—գրեթէ փորձից է առաջացել ու փորձով կերպարանաւորվել, նրանց միւս ճիւղը՝ կենսաբանական գիտութիւնները (կենդանաբանութիւնն ու բուսաբանութիւնը), համեմատաբար ուշ են սկսել փորձն իրանց համար իբրև ուսումնասիրութեան մեթօդ գործածել: Անցեալ դարի վերջին կէսը, առաւելապէս վերջին տասնամեակները, այդ նկատմամբ խիստ ուշագրաւ, չափազանց հետաքրքրական երևոյթներ են հանդէս բերել, երևոյթներ, որոնք ափ ի բերան թողնելով մարդու՝ միևնոյն ժամանակ հիացմունքով են լցնում նրա սիրտը ժամանակակից գիտութեան կատարած առաջադիմութեան ու յայտնագործած սքանչելիքների դիմաց: Կենսական երևոյթների խորհրդաւոր գաղտնիքների մթին անկիւններ մէջ լոյս կաթեցնող ճրագը գիտութեան փորձն է նկատված արդէն և այսօրվայ կենսաբանը (բիօլօգ) այդ ճրագը միշտ վառ բռնած իր ձեռքում՝ իր անելիք ուսումնասիրութիւնները նրանով է լուսաւորում, փորձի է ենթարկում:

Այդպիսի փորձերից է ահա կենդանիների պատուաստը:

Որ բոյսերը պատուաստի ընդունակ մարմիններ են, այդ դեռ հին դարերից յայտնի իրողութիւն է եղել. նոյնիսկ հին հռոմայեցիք մի քանի բոյսերի վերաբերմամբ աջողութեամբ պատուաստը գործ են դրել: Այնու ամենայնիւ այդ երևոյթն ընդհանուրի սեփականութիւն է դարձել, գործնական կեանքի մէջ կիրառվել և վաղուց տնտեսութեան մէջ կարևորութիւն ստացել:

Սակայն կարող էր հին մարդը մտքով անգամ անցկացնել, թէ գալու է ժամանակ, երբ մեծ չափերով պատուաստներ պիտի անվեն նաև կենդանիների, այդ՝ բոյսերի համեմատութեամբ՝ շատ աւելի բարդ օրգանիզմների վերաբերմամբ, թէ նրանց զանազան մասերը կամ գործարանները պէտք է միմեանց հետ փոխանակվեն, միմեանց վրա պատուաստվեն և տեսական-գիտական հետաքրքրութիւնից զատ նաև գործնական խիստ մեծ և կարևոր նշանակութիւն ստանան:

Ցիրաւի՝ խիրուրգիայի մէջ պատուաստը վաղուց հետէ, թէև շատ աննշան չափերով՝ միայն հիւսուածքների մանր կտորներով՝ գործ է ածվել. իսկ յայտնի քիթ «սարքելու» արուեստի մէջ (Rhinoplastik) աւելի քան 500 տարուց ի վեր մեծ կամ փոքր աջողութեամբ ձեռնարկվել է, բայց պատուաստի գիտակցական փորձեր, որոնք նպատակ ունենային զուտ տեսական-գիտական խնդիրներ լուծելու, համեմատաբար շատ ուշ են սկսվել, յամենայն դէպս 18-րդ դարի կէսերից ոչ շուտ, թէև դեռ աւելի վաղ, երբեք միայն կուրիոզի համար, կենդանիների վերաբերմամբ զանազան պատուաստումներ են կատարվել, ինչպէս օրինակ 17-րդ դարի սկիզբներին աքաղաղի «մահմուզը» ոտքից՝ գլխի վրա պատուաստելու փորձերն են ցոյց տալիս: Զուտ գիտական հետաքրքրութեան ու տեսական նպատակով կատարված պատուաստներն, ուրեմն, 18-րդ դարի կէսից են սկսվում, 19-րդ դարի վերջերում միայն լայն չափեր ընդունում և մեր օրերում ծաղկում:

Եւ ինչպէս ուրիշ շատ տեղերում գիտական-տեսական նպատակով կատարված փորձերն անդրադարձել են և գործնական կեանքի վրա, նրա համար խիստ արդիւնաւոր հանդիսացել, այնպէս էլ ներկայ պարագայում, առաւելապէս մեխանիստ բնափիլիսոփաների կողմից վիտալիստ*) կենսաբանների դէմ վարած կռւի շնորհիւ կենսական աշխարհում ընդարձակ չափերով կատարված պատուաստի փորձերն այսօր գործնական զօրաւոր նշանակութիւն են ստացել բժշկութեան մէջ, առաւել կամ պակաս աջողութեամբ գործադրվում են և, շատ հաւանական է, ապագայում խիստ մեծ չափերով պիտի կիրառվեն և մարդկութեան բարօրութեանը հզօրապէս ծառայեն, առաջն առնելով շատ ֆիզիկական տառապանքների:

Արդ՝ տեսնենք թէ ինչ չափով է կատարվել պատուաստը կենդանական աշխարհում, ո՞ր կենդանիներն ու ինչ հասակում աւելի ընդունակ են հանդիսացել պատուաստի և թէ առհասարակ ինչպիսի պատուաստումներ են կատարվել և ինչ աջողութեամբ: Ձեռքի տակ ունենք մեր ուսուցիչ պրոֆ. Կորշելտի կլսով չափ այս նիւթին վերաբերեալ մի աշխատութիւնը (Pegeneration und Transplantation—վերածնունդ և պատուաստ), որ նա սկզբում կարդացել է «Գերմանացի բնագէտների եւ բժիշկների կօնգրէսում», ապա նոյնը աւելի ընդարձակած ու ծանօթութիւններով ճոխացրած հրատարակել. այդ գրքից էլ առնում ենք մեր այս յօդուածի ամբողջ նիւթը:

II

Տրամբլէյի փորձերը և նրանց տուած արդիւնքը.—Պատուաստների ձևերն ու տեսակները.—Պատուաստի հնարաւորութեան չափը.—Պատուաստը միաբջիջների, տափակ և օղակաւոր որդերի, խեցեմորթների, կծիկաւորների և փշամորթների մէջ:

Գիտակցաբար, որոշ ծրագրով ու նպատակով կատարված պատուաստի փորձերը սերտ կերպով կապված են Աբրահամ Տրամբլէյի (Trembley) անուան հետ: Իր այդ՝ այնուհետև խիստ մեծ հռչակ ստացած փորձերը Տրամբլէյը կատարել է ջրային պօլիպներ կոչվող կենդանիների վրա, որոնք անողնաշարների ամենաստորին տիպին են պատկանում, իբրև միմիայն մի վերնամաշկ (Ektoderm) ու ներքնամաշկ (Ektoderm) ունեցող կենդանիներ: Պատուաստելով մի պօլիպի մարմնի առաջին կէսը մի ուրիշ պօլիպի մարմնի երկրորդ կէսի վրա՝ Տրամբլէյը ցոյց է տալիս առաջին անգամ, որ այսպէս երկու կենդանու տարբեր կտորներ միացվում են միմեանց հետ և մի կատարեալ ամբողջութիւն կազմում, որը շարունակում է ապրել, մեծանալ, բազմանալ ու, ընդհանրապէս, կատարել իր կենսական բոլոր երևոյթներն այնպէս, ինչպէս բոլորովին նորմալ մի պօլիպ:

Այս փորձերը երևան են հանել կենսաբանական մի շատ նշանակալից հանգամանք. մինչ առաջները խիրուրգիայի մէջ միայն կաշուի չնչին կտորներ են պատուաստվել միևնոյն կամ մի ուրիշ մարմնի վրա, այս փորձերի ժամանակ կենդանիների հաւասարամեծ կտորներ անգամ պատուաստվել են, միաւորվել ու մի ամբողջութիւն կազմել, կտորներ, որ արդէն իսկ կենսունակ, առանձին-առանձին էլ ապրելու ընդունակ են եղել: Այս հանգամանքը նկատվել է նաև ուրիշների կատարած յետագայ փորձերի ժամանակ՝ ուրիշ կենդանիների վերաբերմամբ:

Տրամբլէյից յետոյ պատուաստի փորձերը շատ աւելի լայն չափերով կատարվում են գրեթէ կենդանական բոլոր տիպերի աչքի ընկնող ներկայացուցիչների վերաբերմամբ, միաբջիջներից սկսած մինչև ամենաբարձր կենդանիները՝ ողնաշարաւորները:

Նախ քան այդ փորձերին անցնելը յիշենք, թէ ընդհանրապէս ինչ հանգամանքներ և ինչ կարևոր կէտեր են ի նկատի առնվել այդ փորձերի ժամանակ: Դրանք են. 1) ինչ տեսակի կտորներ են միաւորվում. 2) ինչ եղանակով կարող է միաւորութիւնը կատարվել. 3) միաւորված կտորներն իրօք օրգանական միութիւն են կազմում թէ ոչ և 4) միաւորված կտորները փոխադարձաբար միմեանց վրա ազդում են թէ ոչ:

Առաջին կէտի նկատմամբ պատուաստները բաժանվում են.

ա) Միևնոյն անհատի մարմնի կտորների միաւորութիւններ (աւտօպլաստիք).

բ) Միևնոյն տեսակին պատկանող զանազան անհատների մարմնի կտորների միաւորութիւններ (հօմօպլաստիք).

գ) Զանազան տեսակների պատկանող

---

*) Կենսաբանութեան (Biologie) մէջ իշխող մեխանիստական եւ վիտալիստական կոչվող ուղղութիւններին, պատեհ առիթով, մենք առանձին յօդուածներ կը նուիրենք: Ա. Տ.-Պ.

դրութեան վրայ, թէ արդեօք ծառայում են բուն նպատակին։

4) Ռուսաստանում գտնվում են բազմաթիւ հազարաւոր Թիւրքահայ գաղթականներ, որոնք կը ցանկային վերադառնալ իրանց հայրենիքը՝ տէր և տիրական լինելու իրանց թողած հողերին, գոյքերին, բայց Կ. Հ. Բ. Ընկերութիւնը անկարող է հայթայթել նրանց այդ միջոցները, իսկ Ընդհ. Միութիւնը կարող էր այդ միսսիան կատարել։

5) Վերջապէս Հ. Բ. Ընդհ. Միութիւնը ձգտում է բարոյական-կուլտուրական կապ հաստատել աշխարհի բոլոր հայերի միջև, մի բան, որ չէ կարող անել Կ. Հ. Բ. Ընկերութիւնը։ Եւ այդ է պատճառը, որ Միութիւնը, չը նայելով որ միայն 6 տարի է՝ ինչ հաստատվել է, ունի արդէն երկրագնդիս զանազան հայաբնակ տեղերում մօտ 70 ճիւղ և նրա հիմնական դրամագլուխը առ 1-ն յունվ. 1911 թ. հասնում էր 15 միլիոն եգիպտական դրուշի, մօտ $1^{1}/_{2}$ միլիոն ր., իսկ այսօր, անշուշտ, թէ ճիւղերի թիւն է շատացել և թէ հիմնական դրամագլուխը։

Յոյս ունեմ, որ այս բացատրութիւններից յետոյ «Հօրիզոնի» մէջ Փ. ծածկանունով թաքնվող պարոնը այնքան ազնիւ կը գտնվի, որ կը խոստովանէ, թէ անձնական ոչ մի հաշիւ չը կայ գործի մէջ և հայութեան ամբողջ զանգուածը բնաւ չէ կարող վնասվել Միութեան ճիւղի բացմամբ Կովկասում, այլ, ընդհակառակն, մեծապէս կօգտվէ։

Միութեան լիազօր՝ Հ. Առաքելեան

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

Սենատի վճռաբեկ քրէական դեպարտամենտի օբեր-պրօկուրոր Պ. Կեմպէն, որին յանձնված է Դաշնակցութեան գործի մէջ երեւան հանված կեղծումների գործը, գտաւ, որ այս գործի մէջ կատարվել են անպայման կերպով կեղծումներ և պահանջեց Լըժինից բացատրութիւն։ Լըժինը արդարադատութեան մինիստրին ներկայացրեց մի զեկուցագիր, որի մէջ ասում է, որ այս գործին սխալմամբ է քաղաքական բնոյթ տրվում և որ իսկապէս Դաշնակցութեան գործը քրէական հասարակ աւազակախմբի և յափշտակիչների գործ է։

Լըժինի կարծիքով նկատողութեան արժանի է այն ցանկութիւնը, որը պնդում էր այս գործը աւարտել կարճ ժամանակամիջոցում, որպիսի ցանկութիւն երեւան եկաւ Պետերբուրգում։

Չորս կամ հինգ տարվայ պրօցեսսը աւարտվեց շտապ կերպով երկու տարվայ ընթացքում, որպիսի հանգամանքի շնորհիւ առաջ եկաւ քննիչի և բոլոր անձանց յոգնածութիւն, որոնք գիշեր ցերեկ տքնել էին աշխատանքի ծանրութեան ներքոյ։

Այսպիսի պայմաններում գործի մէջ կարող էին սպրդել սխալներ, իսկ կեղծիքներ,— պնդում է Լըժինը,—չեն կատարվել գործի՝ իր ձեռքում եղած ժամանակի ընթացքում։ Նա գործը ամբողջովին յանձնել է դատախազի օգնական Ակսակօվին, որը կազմում էր մեղադրական ակտը։ Եթէ քննական գործի մէջ կեղծումներ լինէին, Ակսակօվը չէր կարող չը նկատել, հետեւաբար պատասխանատու է և նա։ Իր զեկուցագրի մէջ Լըժինը քանիցս յիշում է հայերի կողմից նրան կաշառելու փորձերի մասին, յիշելով որ իրան առաջարկում էին 180,000 րուբլի գումար։

Լըժինը տալիս է մի շարք անձանց անուններ, որոնք փորձելիս են եղել կեղծիքներ մտցնել գործի մէջ նախնական քննութեան ժամանակ։ Լըժինը խոստանում է ապացուցել, որ եղել են դէպքեր թարգմաններին և այլ պաշտօնեաներին կաշառելու։

Օբեր-պրօկուրոր Կեմպէն անհրաժեշտ է համարում Լըժինին դատի յանձնել, որպէս կեղծումների գլխաւոր մեղաւոր, նրա հետ դատի ենթարկելով բոլոր մասնակիցներին։ Կեմպէն կեղծումներ է գտել նաև քննական գործի մէջ, մինչև նրա՝ պրօկուրորի ձեռքը հասնելը, մեղադրելով Լըժինին, որ նա լռել է այն կեղծումների նկատմամբ, որոնք ի վնաս մեղադրեալների էին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սպիտակ Ծաղկի տօնը Մօզդոկում

Մօզդոկ, 21 ապրիլի

Ապրիլի 20-ին վաղ առաւօտեան Սպիտակ Ծաղկի տօնին աշխատող-աշխատողուհիները քաղաքի բոլոր մասերում վաճառում էին սպիտակ ծաղիկներ։

Օրիորդները՝ «Покупайте бѣлую ромашку» մակագրութեամբ ժապաւէնները ուսներին գցած և ձեռքներին կնքած տուփը բռնած՝ մեծ եռանդով նոյնիսկ տնէտուն էին շրջում և ամենքին վաճառում էին սպիտակ ծաղիկներ։

Սպիտակ Ծաղկի օգտին երեկոյեան հայոց դպրոցի դահլիճում նշանակված էր երաժշտական նուագածութիւն, գրական երեկոյթ և պար։

Նոյն նպատակի համար մի այլ տեղ ցոյց տրվեցին մոգական լապտերով պատկերներ։

Վ. Վ.

Ազգային փողերով առեւտուր

Մարրասա (Շամախու գաւ.), 10 ապրիլի

Մեր եկեղեցին իր հասոյթներից տարեկան 400 ր. պարտաւոր է յանձնել դպրոցի հոգաբարձութեան տրամադրութեանը։ 400 րուբլու կանոնաւոր յանձնումը կանոնաւոր է դարձնում և ուսուցչական պերսօնալի ռոճիկը, իսկ անկանոն յանձնումը՝ անկանոն դարձնում, որ ցանկալի և պատւաբեր չէ։ Երէցփոխը, ինչպէս մեզ հաւատացնում են հոգաբարձուները, բաւական չէ, որ անցեալ տարվանից մնացել է պարտ դպրոցին մօտ 300 ր., այլ և այս տարվայ 400 ր. դիմաց էլ ոչինչ չէ յանձնել հոգաբարձութեանը։ Մինչդեռ լսվում է, որ նա եկեղեցու դրամով առեւտուր է անում իր սեփական գրպանի օգտին։

Բացի այդ՝ արդէն նրա եռամեայ պաշտօնավարութեան շրջանը լրացել է, և ոչ ինքն է հրաժարվում և ոչ էլ ժողովուրդն է հետաքրքրվում նրա պաշտօնի հարցով։

Թեմիս սրբազան առաջնորդը, ինչպէս հոգաբարձուներն են ասում, լրվին տեղեակ է մեր գրածներին։ Բայց նա փոխանակ անարժան երէցփոխի ձեռքից դուրս կորզելու եկեղեցու դրամները, ընդհակառակը, կարծես մի տեսակ շոյում է նրա քայլը։ Այո, շոյել ենք հասկանում մենք, երբ նոյն հոգաբարձուներից լսում ենք նրա մօտաւորապէս այս խօսքերը, թէ՝ վնաս չունի, կը տայ... Երևի, դա մեր սրբազանի կողմից մի տեսակ նուրբ պօլիտիկա է։ Եթէ այո՝ ապա նա պարտք ունի մեզ ծանօթացնելու, թէ դա ի՛նչպիսի պօլիտիկա է, երբ շոյվում է երէցփոխի առնուազն անբարեխղճութիւնը, իսկ հացի փոխարէն դատարկ օդ է յանձնարարվում առանց այն էլ զրկված հայ ուսուցչին։

Կարծում ենք, որ մեր երէցփոխը իր տեղն ուղիղ կը նստէր, եթէ իմանար, որ կօնտրօլ կայ իր պաշտօնի վրա։ Այս իսկ տեսակէտից մենք ցանկալի ենք համարում, որ մեր թեմակալ առաջնորդը ժամանակ առ ժամանակ շնորհ բերի մեր գիւղը, որ ընդամենը 6—7 վերստ է միայն հեռու Շամախուց։ Այսօրինակ անբարեխիղճ գործերը տեղն ու տեղը քննելն ու կարգի և կանոնի տակ դնելն ունի իր անվիճելի օգուտները։ Ինչպէս լսում ենք, մեր առաջնորդը 4—5 տարի է, գուցէ և աւելի՝ որ վերոյիշեալ 6—7 վերստ ճանապարհը կտրել չէ կարողանում։

Անկեղծօրէն ցաւում ենք այդ տխուր երեւոյթի համար։

Հայրենակից

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Թեմիր-Խան-Շուրա, 22 ապրիլի

Այսօր ցեր. ժամը 1-ին տեղս ժամանեց Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվը իր ամուսնու կոմսուհի Ելիզավէտա Անդրէեւնայի հետ միասին։

Առաւօտեանից ամբողջ քաղաքը սպասողական դրութեան մէջ էր. ամենքը փափագում էին տեսնել Փոխարքային։

Նորին Պայծառափայլութիւնները մեծ շուքով ուղղակի գնացին ռուսաց եկեղեցին, որտեղ կարճ մաղթանք լսելուց յետոյ՝ եկան հայոց եկեղեցին։ Այստեղ Ղեւոնդ քահանան դիմաւորելով նրանց՝ հայ ժողովրդի կողմից մի հակիրճ ճառով շնորհաւորեց կոմսի և կոմսուհու գալուստը, որոնք կարճ աղօթք լսելուց յետոյ՝ դիմեցին նահանգապետի տունը, որտեղ տեղիս բէալական և քաղաքային դպրոցների աշակերտները՝ ուսուցչական կազմով և երաժշտական նուագակցութեամբ՝ դիմաւորեցին Նորին Պայծառափայլութիւններին։

Նահանգապետի տանը մինչև ժամը 5-ը մնալով, կոմսը և կոմսուհին այցելեցին տեղս բացված ցուցահանդէսը, պատւաւոր ներկայացուցիչների և բարձրաստիճան պաշտօնեաների հետ։ Այստեղ ցուցահանդէսի կարգադրիչ յանձնաժողովի անդամներից մէկը շնորհաւորելով Փոխարքայի և իր ամուսնու գալուստը՝ մի ծաղկեփունջ մատուցեց կոմսուհուն։

Ապա ռուսաց քահանայի մաղթանքով տեղի ունեցաւ ցուցահանդէսի հանդիսաւոր բացումը։

Առաջ եկաւ Ալ. Քալանթար և շնորհաւորեց ցուցահանդէսի բացումը։ Ա. Քալանթարը յայտնեց, որ ներկայ ցուցահանդէսում ինքը և իր ընկեր գիւղատնտես-մասնագէտները նպատակ են դրել որքան կարելի է լայն չափով աջակցել տեղիս գիւղատնտեսութեան զարգացման՝ թէ դասախօսութիւններով և թէ գործնական փորձերով։

Վերջում կոմսը շնորհակալութիւն յայտնեց Ալ. Քալանթարին։

Նորին Պայծառափայլութիւնները դիտելով գիւղատնտեսական և տնայնագործական բոլոր բաժինները և իւրաքանչիւր ճիւղի մասնագէտից բացատրութիւն ստանալով հետաքրքրաշարժ առարկաների վերաբերեալ՝ վերադարձան նահանգապետի տունը։

Ցուցահանդէսի մուտքը ձրի է, միայն փոխ-նահանգապետի կողմից բաց թողված առանձին տոմսակներով։

Ա. Ասլանեան

ՄԵՇՉԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Նոր-Բայազէտ, 17 ապրիլի

Ապրիլի 8-ին, քաղ. վարչութեան շէնքում կայացաւ մեշչանական հասարակութեան հերթական ժողովը։

Նախագահ քաղաքագլուխ Գ. Արծրունին, բանալով ժողովը, յայտնեց, որ օրակարգի խնդիրներն են՝ հողային և հասարակական հարկերի բաժանագրումը և այլ տեղական մանր հարցեր։ Ծախքերի ամենամեծ գումարն էր հողային արքունական հարկը, որ պէտք է մուծվի գանձարան 5933 ր. 23 կ.։ Այդ գումարը հողի վրա բաժանագրելով չվանին ընկնում 20—21 կ., կամ դեսետինի հաշւով 1 ր. 20 կ.։ Ապա գալիս է քաղ. ռուսաց ուսումնարանի օժանդակութիւնը, որ տրվում է մեշչանական հասարակութեան կասսայից 1320 ր. տարեկան։ Միդասեան դպրոցին՝ 400 ր., աչքի հիւանդանոցին՝ 300 ր., հանգուցեալ Խրիմեան Հայրիկի անուան թոշակաւորների (4 հոգի)՝ 100 ր., հարկահաւաքի՝ 200 ր., ծառայի՝ 100 ր., ժամկոչի՝ 60 ր., բահերի և քլունգների՝ 67 ր. 60 կ. և այլ աննկատելի ծախքեր՝ 100 ր., ընդամենը՝ 8580 ր. 83 կ.։ Դրանից զատ ծախս է տրվելու քաղատեղիի պահապանների (զօրուղչինների) 1000 ր., որը նոյնպէս հողային հարկի հետ միասին պէտք է բաժանագրվի հողատէրերի վրա՝ 10-ական կոպ. իւրաքանչիւր քաղատեղի չվանի համար (10,000 չվանը՝ 1000 ր.)։

Այդ ծախքերի դէմ, այսինքն ելքի դէմ ժողովը մուտք ի նկատի ունի 450 ր. մի կտոր արօտից, որ տրվելու է ոչխարատէրերին, և 400 ր. էլ եզների արօտից, գումարը 850 ր., իսկ մնացեալ ծախքի գումարը (ելքը), ձայների մեծամասնութեամբ որոշվեց բաժանագրել ընտանիքների վրա, մի մասը, որ կապ ունի հողի հետ (հողային, ջրհարկինը, հարկահաւաքինը և այլն) հողի վրա, իսկ միւս մասը (ուսումնարանների, հիւանդանոցի և այլն) հողի վրա, այսինքն ըստ կարողութեան հարուստ դասակարգի վրա։ Եւ պէտք է ասած, որ այդ ամենաարդար որոշումն է մեր գաւառական-ժողովրդական կեանքում։

Ապա ժողովի շարունակութիւնը տեղի ունեցաւ 4 օրից յետոյ, ապրիլի 12-ին, ուր դրված էին տաւարի, արօտների և ոչխարապահութեան խնդիրները։ Որովհետև մինչև այժմ անհաշիւ թւով ոչխարների հօտեր և տաւարների նախիրներ արածում են մեր քաղատեղերում, մեծ վնասներ հասցնելով բուսականութեան՝ նրան սաստիկ դրութեան մէջ խեղդելով, ուստի ժողովը սկզբունքով վճռում է անպայման դուրս քշել ոչխարները մեր խոտատեղերից մինչև ապրիլի 20-ը։ Ոմանք, աւելի ոչխարատէրերը (որոնք թւով շատ փոքրամասնութիւն են կազմում) թէև ցանկութիւն են յայտնում մինչև մայիսի 1-ը, բայց ժողովը չէ ընդունում։

Այդպիսով որոշվում է ոչխարը դուրս հանել ապրիլի 20-ից սկսած դէպի եայլաղատեղերը, ուր թէպէտ առ այժմ ձիւնով է պատած, նոյնպէս և տաւարը, եզները և ստերջ կովեր ու աչառներ դուրս տանել հանդերից դէպի սարերի արօտները։

Սարերի տաւարարածների համար վարձ որոշվեց մի եզը պահելու համար 1 ր. 20 կ., որից 50 կ. քաղաքի օգտին վերցնել, իսկ 70 կոպէկը՝ պահողին։ Կովի արածացնելու վարձ մէկ րուբլի տալ նախրապաններին։ Ժողովում հարց տրվեց նաև 20 կ. աւելացնել կովեր պահելու վարձի վրա, որպէս զի այդ գումարով ցուլեր գնվեն նախիրի մէջ թողնելու համար։ Բայց ժողովականների մեծ մասը չընդունեց, առարկելով որ ցուլեր կան զանազան ընտանիքներին, որոնք առանց այն էլ արածելու են նախիրներում, թէպէտ այդ ցուլերը, իբրև «դեռահաս դանաներ», էլ աւելի այլասերում են մեր կովերին... Ըստ երեւոյթին ժողովը այդ հարցում սխալ քայլ արեց, քանի որ, ինչպէս գիտենք, մեր նախիրներից և ոչ մէկում մի կարգին ցուլ չը կայ, մինչդեռ լաւ ցուլերն են ազնուացնում առ հասարակ կովերի և անասունների սեռը։

Այդ տեսակէտից հարկ եմ համարում յիշել, որ այս տարի մեր քաղաքի կովերի կէսից աւելին չեն ծնել, այլ մնացել են ստերջ, որը մեծ վնաս է պատճառել տանտէրերին, քանի որ մի կովը իր գնի չափ կեր է սպառել և ոչ մի օգուտ չէ բերել տիրոջը, այսինքն ոչ կաթ, ոչ մածուն և ոչ մի հորթիկ չէ տալիս՝ ցուլեր չը լինելու պատճառով։

Գ. Մինասեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 25 ապրիլի

Երեկոյեան նիստում նախագահում է Րօդզեանկօն։

Մինիստրների օթեակումն է առեւտրի մինիստրը։

Հերթին կառավարութեան բացատրութիւնների քննութիւնն է Լէնայի դէպքերի առթիւ։

Ջվէնգինցեվը հոկտեմբերեանների անունից առաջարկում է մի բանաձև, որով առաջարկվում է ներքին գործերի մինիստրի բացատրութիւնները ընդունել անբաւարար. միևնոյն ժամանակ ի նկատի ունենալով առևտրի մինիստրի պաշտօնական յայտարարութիւնը՝ թէ Լէնայի դէպքերի բազմակողմանի լուսաբանութեան համար նշանակվելու է յատուկ հեղինակաւոր անձն, բանաձևը առաջարկում է ընդհատել վիճաբանութիւնները ներկայ հարցապնդման առիթով, որպէսզի առաջիկայ քննութեան հետեւանքները հաղորդվեն Դումային այս նստաշրջանում։

Գեգեչկօրին նկատի առնելով բանւորների շահերը և դումայական նախկին որոշումները՝ առաջարկում է հոկտեմբերեանների բանաձևը քուէարկութեան դնել միայն վիճաբանութիւններից յետոյ։

Պօկրօվսկի 2-րդը բանաձևի մէջ տեսնում է հասարակական կարծիքի արդարացի զայրոյթը հանգցնելու ցանկութիւն՝ բխող Մարկօվներից. անկարելի է լուրջ նշանակութիւն տալ սենատօրական քննութեան, որովհետև մինչև օրս Ստոլիպինի սպանութեան մասնակից Կուրլօվները, Սպիրիդօվիչները և Կուլեաբկօները ոչ մի պատիժ չեն կրել. այդ գործի առիթով սենատօրական քննութիւնը սոսկ մի հետեւանք տուեց, թէ Ստոլիպինի սպանութեան մէջ չէ կարելի ոչ ոքի մեղադրել, բացի այս-ինչ համարի այս-ինչ ժամի հրահանգագրից։ Միակ ընդունելին կը լինէր դումայական քննիչ յանձնաժողով նշանակելու առաջարկը, որը յիրաւի կարող է հանգստացնել հասարակական կարծիքը։ Իսկ այժմ անհրաժեշտ է չընդհատել վիճաբանութիւնները, որպէսզի հնարաւորութիւն տրվի հասարակական զայրոյթին արտայայտվել մինչև վերջ։ Անհրաժեշտ է, որպէսզի ժողովրդական ներկայացուցչութիւնը և հասարակական կարծիքը երախակալներ հայցեն այն պարոններին, որոնք թոյլ են տալիս իրանց հրապարակով աղաղակել, թէ մենք կրակեցինք և կը կրակենք. (աջից բարձրացած ուժեղ աղմուկը ծածկում է հռետորի վերջին խօսքերը, որ իջնում է ամբիոնից)։

Նախագահը Պօկրօվսկիին կարգի է հրաւիրում։ (Աղմուկը շարունակվում է)։

Բուլատը պաշտպանում է հոկտեմբերեանների առաջարկութիւնը, պայմանով որ ընդունվէին աշխատաւորականների երկու առաջարկը, նախ՝ լսել մինչև վերջը բոլոր հռետորներին, որովհետև նրանցից մի քանիսը նոր տեղեկութիւններ ունեն ստացած տեղից, երկրորդ՝ նշանակել կառավարական քննիչ մասնաժողովի փոխարէն մի յանձնաժողով Դումայի անդամներից, որոնք վայելում են ժողովրդի վստահութիւնը։

անհատների մարմինների կտորների միաւորութիւններ (հէտէրօպլաստիք)։

Ինչպէս յետոյ մանրամասնօրէն կը ծանօթանանք, յիշեալ պատուաստումներից աջողութեամբ դուրս են գալիս Ա. և Բ. կէտերին վերաբերեալները, այսինքն այն միաւորութիւնները, որ առաջանում են միևնոյն անհատի կտորներից կամ միևնոյն տեսակի զանազան անհատների կտորներից, ուրեմն, այսպէս կոչված, աւտօպլաստիկ և հօմօպլաստիկ միաւորութիւնները։ Այլ և այդ հիւանդութիւնները տեւական և արդիւնաւոր են լինում առաւելապէս այն դէպքերում, երբ միացվող երկու կտորը միասին համապատասխանում են կենդանու նօրմալ մարմնին, այսինքն երբ պատուաստվող կտորը մօտաւորապէս միւսի պակաս մասն է լրացնում։ Այսպէս, օրինակ՝ եթէ մէկ կամ մի քանի անձրևորդի կտորներ այնպէս են միացվում, որ նրանք իրանց տեղով և դիրքով մի ամբողջ որդ են կազմում, ապա այդպիսի աւտօպլաստիկ կամ հօմօպլաստիկ միաւորութիւնները կենսունակ են լինում ու այդ եղանակով երկու կամ նոյնիսկ երեք կտորներից կազմված որդերը ապրում են մի քանի տարի, ոմանք նոյնիսկ մինչև 10 տարի, որով և իրանց կեանքի տեւողութեամբ յետ չեն մնում նօրմալ որդերից։ Այդպիսի միաւորութիւնների ժամանակ անհրաժեշտ է, սակայն, որ կտրված մասերի համանման գործարանները միմեանց հետ սերտ կերպով միանալով՝ մի կատարեալ ամբողջութիւն կազմեն և իրօք՝ այդպիսի դէպքերում, ինչպէս յետոյ կը տեսնենք, միաւորութիւնը միշտ կատարեալ է լինում։

Ինչպէս յիշել ենք, պատուաստի փորձերը վերջին 10-ամեակներում աւելի ընդարձակ չափերով են կատարվել և կենդանիների ընդարձակ շրջաններ ընդգրկել։ Իսկ վերջին 10—15 տարիների ընթացքում կատարված հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ կենդանիների զանազան մասերի՝ ուրիշ կենդանիների մարմնի վրա փոխադրելու կամ հէնց իրանց մարմնի այլ մասերի վրա պատուաստելու հնարաւորութիւնը անհամեմատ աւելի մեծ է, քան մինչև այդ ժամանակներս ընդունված է եղել։

Մեծ, հասարակ աչքին տեսանելի կենդանիների վրա փորձեր կատարելն, ի հարկէ, հեշտ է, մինչ մանրադիտային օրգանիզմների հետ այդ կողմից գործ ունենալը չափազանց դժուար է. բայց և այնպէս գործի դժուարութիւնները, ուղղակի տաժանակիր աշխատանք պահանջող փորձերն անգամ երբէք արգելք չեն հանդիսացել գիտնականներին և միկրօօրգանիզմներն իրանց հետազօտութիւնների առարկայ դարձնելու, և մենք տեսնում ենք, որ նախակենդանիները, այդ՝ միայն մանրադէտի օգնութեամբ տեսանելի՝ միաբջիջ օրգանիզմներն էլ պատուաստի համար կատարված փորձերին են ենթարկվել։ Այսպէս՝ մի քանի ականաւոր գիտնականներ արմատոտանիների (Rhizopoda) և ինֆուզօրիաների դասերին պատկանող զանազան մանրէների կտորներ աշխատել են միացնել, մի ամբողջութիւն կազմել և այդ փորձերը, բաւական դժուարութիւնների յաղթահարելուց յետոյ, աջողութեամբ են պսակվել։ Ցերվօրնը շառաւիղաւոր (Radiolaria) կենդանիներից մէկի (Thalassicolla nucleata) կենտրոնական կապսուլը *) պատուաստում է մի ուրիշի վրա. վէրքերը բուժվում են, և միաբջիջ այդ օրգանիզմը սկսում է իր ստացած նոր կենտրոնական կապսուլով ապրել այնպէս, ինչպէս բոլորովին նօրմալներն են ապրում։

Պատուաստի փորձեր բնականաբար մեծ քանակութեամբ կատարվել են բազմաբջիջների վրա։ Աղեխորշաւորների վերաբերմամբ կատարված միակ և ամենահին փորձերը Տրամբլէյինն էին, ինչպէս տեսանք։ Մի անգամ արդէն սկսված գործը կանգ չէ առնում, սակայն, այնուհետև շատ ընդարձակ չափեր ընդունում։ Եւ այդ կողմից խիստ արդիւնաւոր հետեւանքներ են տալիս որդերի, յատկապէս տափակ և օղակաւոր որդերի պատուաստները։ Տեխնիքական որոշ նախապատրաստութիւններ տեսնելուց յետոյ աջողվում է, օրինակ՝ տափակ որդի կտորները միմեանց մօտ բերելով՝ լիակատար ամբողջութիւն առաջացնելու, որը բնաւ իր կենսունակութիւնը չի կորցնում (Մօրգանի փորձերը)։

Օղակաւոր որդերից առանձնապէս անձրևորդերի վրա պատուաստի բազմապիսի փորձեր են կատարվել, որոնք և գրեթէ միշտ աջողութեամբ են պսակվել։ Այստեղ՝ կտրված մասերը շատ բարակ ասեղների և մի քանի երիզակապերի միջոցով մի քանի օրվայ ընթացքում միացվում՝ մի ամբողջութիւն են կազմում։ Երկու, երեք և աւելի մասերից այս եղանակով բոլորովին այլանդակ և միանգամայն տարբեր մեծութեան կտորներ, բայց բնական դրութեամբ միաւորվելով՝ բնական յատկութիւններով որդեր են առաջացնում, որոնք նշանաւոր չափով աճում և տարիներ շարունակ ապրում են։ Նոյնիսկ այն միաւորութիւնները, որոնք իրանց կապակցութեամբ բնական, նօրմալ որդի չեն համապատասխանում, կարողանում են բաւական երկար ժամանակ կենսունակ մնալ։ Օրինակ՝ պատուաստում են այնպէս, որ ստացվում է չափազանց երկար և կամ չափազանց կարճ որդ (գլխի կտոր և պոչի կտոր), այսինքն բնականին անհամապատասխան, բայց և այնպէս այդպիսի միաւորութիւնները տարիներ շարունակ ապրում են։

Պատուաստի աջող փորձեր են արվել նաև այնպիսի օրինակների վրա, որոնց նկատմամբ թերևս այդպիսի բան ամենից քիչ սպասելի լինէր. խօսքը թիթեռների կծկակների մասին է։ Յայտնի է, որ թիթեռները՝ ձուից սկսած մինչև իրանց կատարեալ կերպարանքը առնելը՝ զարգացման զանազան աստիճաններ են անցկացնում. ուրիշ խօսքով, նրանք զարգանում են կերպարանափոխութեամբ (ձու—թրթուր—կծկակ—թիթեռ)։ Գիտնականի փորձ կատարող աջողակ ձեռքը մօտեցել է անա թրթուրների զարգացման վերջին աստիճանը ներկայացնող կծկակներին և նրանց վերաբերմամբ էլ պատուաստումներ կատարել։ Կծկակների կտորներն ի մի բերվելով՝ միաւորվում, մի ամբողջութիւն են կազմում. բայց երբ պատուաստված այդ օրգանիզմները իրանց զարգացման ընթացքը կատարում վերջացնում են, երբ ուրեմն կծկակներից թիթեռներ են դուրս գալիս, այդպիսի թիթեռների՝ համապատասխան իրանց պատուաստի երկու մասից բաղկացած լինելը ակներև է դառնում։ Յաճախ էլ ճիւաղային կերպարանքներ են ցոյց տալիս, եթէ այդպիսի միաւորութիւններ են կատարված, որոնց գումարը մի անհատից մի կենդանուց աւելի է եղել։ Պատուաստը բռնում է նաև այն ժամանակ, երբ կծկակների փոքր կտորներ են փոխադրվում մեծ կտորների վրա. կերպարանափոխութիւնից յետոյ կտորները որոշակի զանազանվում են միմեանցից։ Իսկ եթէ մի կծկակի առաջին կամ գլխի մասը պատուաստվում է միւսի երկրորդ կամ ետեւի մասի հետ, կտորներ, որոնք միասին մօտաւորապէս մի ամբողջ կենդանի են կազմում, ապա այդ դէպքում միաւորութիւնն այնպիսի կատարեալ ձևով է առաջանում, որ յետոյ այդպիսի կծկակից առաջ եկած թիթեռի վրա միաւորութեան տեղն այլ ևս չի նշմարվում և ուրեմն չի երևում, թէ այդ թիթեռը երկու կտորից է բաղկացած։

Բացի վերոյիշեալներից պատուաստի փորձեր են արվել անողնաշար կենդանիների և միւս տիպերի ներկայացուցիչների վրա՝ փշամորթների (Echinodermata) և «պարկաւորների» (Tunicata). այստեղ ևս միևնոյն աջող հետեւանքներն են ստացված. Ծովաստղերի (փշամորթ) բազուկներն, օրինակ, առանց դժուարութեան, պատուաստվում են ուրիշ ծովաստղի վրա. պատուաստը «բռնում է», և կենդանին շարունակում է իր նախկին կեանքն այնպէս, կարծես ոչինչ պատահած չը լինէր։ Այսքան՝ անողնաշարների վրա բնական դրութեամբ կատարած աւտօպլաստիկ և հօմօպլաստիկ պատուաստումների մասին։ Աւելի հետաքրքրական են և գործնական նշանակութիւն էլ ունեն կամ կունենան, սակայն, ողնաշարաւորների պատուաստումները, որոնց և դառնում ենք այժմ։

Աւետիք Տէր-Պօղոսեան

(Կը շարունակուի)

---

*) Կենտրոնական կապսուլ կոչվում է շառաւիղաւորների մարմնի «ներքին պլազմա» անունը կրող մասը, որ իր մէջ է պարունակում բջջակորիզը և որ «արտաքին» պլազմայից բաժանվում է մի նուրբ թաղանթով. ամբողջ կենդանին սակայն միայն մի բջիջ է ներկայացնում։ Ա. Տ.-Պ.

Չխէիձէն գտնում է, որ Լէնայի դէպքերի մասին ուղղված հարցապնդումը հանդիսանում է ըստ էութեան հարցապնդում Ռուսաստանում տիրող երբեք արդի դրութեան մասին։ Առհասարակ ապրիլի 4-ի դէպքերը բոլորովին պարզ են. Նրանք բղխում են Դումայի ամբողջ հինգամեայ գործունէութիւնից։ Վիճաբանութիւններին վերջ դնելը կը լինի միայն մանեօվր՝ գործը յետաձգելու։ Սօց.-դեմօկրատները բողոքում են, որ այդ եղանակով մեռցնում են այն արիւնալի դէպքը, որ սարսափի բերեց ոչ միայն ռուս հասարակութեան լաւագոյն մասին, այլ և համայն կուլտուրական աշխարհին (ծափահարութիւն ձախից)։

Մօտօվիլօվը նացիօնալիստների անունից բանաձև է առաջարկում անհրաժեշտ ընդունել արդարացի քննութեան համար, ունենալ աւելի լիակատար տեղեկութիւններ Լէնայի դէպքերի ճշգրիտ ընթացքի մասին, որպիսի տեղեկութիւններին պէտք է իրագեկ լինի Դուման ամենակարճ ժամանակամիջոցում։

Քուէարկվում է հօկտեմբրեանների առաջարկութիւնը—յետաձգել հարցապնդման յետագայ քննութիւնը։

Առաջարկութիւնն ընդունվում է 101 ձայնով ընդդէմ 96-ի (ինն մարդ ձեռնպահ են մնում)։

Դուման գիմում է քուէարկելու բանաձևերը։

Նախագահը յայտնում է, որ Բուլատի առաջարկած ուղղումը բաժանվում է երկու մասի. Նրա երկրորդ մասը, որ վերաբերում է 7 պատգամաւորից յանձնաժողով ընտրելուն, չէ կարող քուէարկվել. առաջին մասը՝ բոլոր հռետօրներին լսելու մասին ինքնին վերանում է, քանի որ հօկտեմբրեանների առաջարկութիւնը վիճաբանութիւնները յետաձգելու մասին արդէն ընդունվեց։

Բուլատը յայտնում է, որ նակազը խախտվեց, և բողոքում է նախագահի բացատրութեան դէմ։

Նախագահը պնդում է, որ Բուլատի ուղղումի երկրորդ մասը չէ կարելի քուէարկել։

Կարդացվում են բացի վերոյիշեալներից սօց.-դեմ., առաջադիմականների և աշխատաւորականների բանաձևերը, որոնցով դայրոյթ է յայտնվում բանւորներին գնդակահարելու առիթով, և ներքին գործերի մինիստրի բացատրութիւնները ընդունվում են անգոհացուցիչ։

Բանաձևերը մերժվում են։ Նախագահը հարցը սպառված է յայտարարում։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, ապրիլի 26-ին, Գ. Սունդուկեանի մահվան քառասունքի օրը, Վանքի մայր տաճարում մատուցվեց պատարագ և ապա կատարվեց հոգեհանգստեան կարգ հանգուցեալի գերեզմանի վրա։ Կարգը կատարեց Սունդուկեան ընտանիքի ծխատէր Եզնիկ ա.-քահ. Երզնկեանը միայնակ, սպասաւորութեամբ երկու դպիրների և ներկայութեամբ հանգուցեալի ընտանիքի, բարեկամների, ազգականների, «Մշակի» խմբագրութեան ներկայացուցչի, հայ և վրաց դերասանների և բազմաթիւ հասարակութեան։

◆ Այսօր, երեկոյեան ժ. 8½-ին, Գրական-Գեղարուեստական Սալոնում տեղի կունենայ հերթական jour-fixe, նուիրված Գաբրիէլ Սունդուկեանի յիշատակին։ Տ. Նազարեանը ցանկալի է համարում, որպէս զի հիւրերը լինեն մեծ դրամատուրգի հերոսների տարազով հագնված։ Հրաւիրված են նաև Թիֆլիսի ղարաչուխալները, որոնց թւում կը լինեն այն Պէպօները, որոնք հանգուցեալ դրամատուրգին «ծտի պէս թացրին»։

◆ Լոյս տեսաւ «Տարազի» ապրիլի համար-ալմանախը, որ ամբողջովին նուիրված է Գ. Սունդուկեանի յիշատակին։ Ներկայ համարում զետեղված են բազմաթիւ յօդուածներ և յիշողութիւններ Գ. Սունդուկեանի մասին։ Ալմանախը զարդարված է մեծ քանակութեամբ նկարներով, որոնք աջող կերպով են կատարված։ Յօդուածներն ու յիշողութիւնները արդիւնք են մեր գրականագէտների և գործիչների գրչի։ Յանձնարարում ենք այս ալմանախը հայ հասարակութեան, որը կարող է գեղեցիկ զարդ ծառայել իւրաքանչիւր հայի սեղանին։

◆ Ապրիլի 25-ին, երեկոյեան ժամը 4—7-ը Թիֆլիսում տեղաց խոշոր անձրև, որ ջրով լցրեց շատ նկուղներ, հասցնելով զգալի վնասներ։ Կուրը յորդացաւ և հեղեղեց շրջակայ կղզիները։ Անձրևի ժամանակ Վերայի Թաղամասում, բակում կանգնած մի մարդ տեղն ու տեղը կայծակնահար եղաւ և մեռաւ, իսկ մի ուրիշը ստացաւ լուրջ այրուածքներ։ Կայծակնահար եղած մարդը Դիղօմի գիւղացի Գէորգ Փիրադեանն է, 28 տարեկան, վաճառական, իսկ այրուածքներ ստացողը՝ Երէդի գիւղացի Ալէքսանդր Գելխաշվիլին է։ Սրա կեանքը վտանգից զերծ է։

◆ Թիֆլիսի նահանգապետը հնարաւոր չը գտաւ ընթացք տալ Թիֆլիսի վաճառականութեան շրջաններում առաջացած յղացումին, ծեր և տնանկ վաճառականների համար անկելանոց հիմնելու միջնորդութեանը, մինչև որ անկելանոց հիմնելու համար որոշված չեն լինի նրա հասոյթները։

◆ Թիֆլիսի վաճառականների աւագ Ա. Միլեանը մայիսի 6-ին հրաւիրում է վաճառականների արտակարգ ժողով տնանկ և ծեր վաճառականների համար նախագծվող անկելանոց հիմնելու նպատակով միջոցներ որոնելու մասին խորհրդակցելու։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը ստացել է տեղեկութիւն Ռօստօվից և այլ քաղաքներից, որ ալիւրի պուդին պակասել է դարձեալ 25 կոպէկ։ Այս հանգամանքն ի նկատի առնելով, քաղաքային վարչութիւնը մօտ օրերս նիստ կը գումարի հացի սակագնի վերաքննութեան նպատակով։

◆ Դէպի Միջին-Ասիա կատարած ճամբորդութիւնից յետոյ Թիֆլիս վերադարձաւ Սևումեան-Արմէնեան դերասանական խումբը։ Խմբի անդամները յոյժ բաւական են մնացել իրանց ներկայ տուրնէից, ստանալով թէ բարոյական և թէ նիւթական վարձատրութիւն։ Խումբը մտադիր է Թիֆլիսում մի երկու ներկայացում կազմակերպել, իսկ ամառվայ ամիսների ընթացքում, այն է մայիսից յետոյ խաղալ Անդրկովկասի հայաբնակ վայրերում։

◆ Թիֆլիսի դումայի իրաւասու Եակօվ Սուլաբերիձէն քաղաքագլխին ներկայացրել է մի գրութիւն, որով առաջարկում է մտցնել սանիտարական տուրք, իսկ այս գործը միահամուռ կերպով պաշտպանելու համար, բանակցութեան մէջ մտնել այլ քաղաքների ինքնավարութիւնների հետ։ Այս խնդիրը ժամանակին յարուցված է եղել, սակայն աննպատակայարմար համարվելով՝ գործադրութեան մէջ չէ մտել։

◆ Թիֆլիսի նաւթավաճառների մեծ մասը մինչև այժմ առևտուր է անում, չունենալով քաղաքային ինքնավարութիւնից դրա համար վկայական։ Ոստիկանութիւնը, համաձայն քաղաքային վարչութեան խնդրանաց, փակեց այդպիսիները։ Ներկայիս նաւթավաճառները խնդրում են, որպէս զի իրանց վկայականներ տրվեն։

◆ Թիֆլիսի մի քանի աղագրողներ միջնորդութիւն են յարուցել Փոխարքայի առաջ, որպէս զի թոյլատրվի աղագրողների կովկասեան ընկերութիւն հիմնել։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատեց իրաւասու Ա. Բաբեանի նախաձեռնութեամբ հիմնված բնակարան վարձողների և էժան բնակարան ունեցողների նորակազմ ընկերութեան կանոնադրութիւնը։

◆ Ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերը Արքունական Թատրոնում կը խաղացվի շարունակաբար Մօլիէրի «Դօն-Ժուան» պիէսը։

◆ Ապրիլի 24-ին, Բախկալնի փողոցում, խուզարկու ոստիկանութիւնը խուզարկեց Ռամազան Մահմեդօվի բնակարանը և գտաւ այնտեղ ատրճանակի 40 հատ փամփուշտ։

◆ Կիրակի, ապրիլի 29-ին, Ժողովրդական Տանը ուսուցիչ Ա. Յարութիւնեանը հայերէն լեզուով կը դասախօսէ Գ. Սունդուկեանի մասին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Տան Թատրոնում

Գ. Սունդուկեանի յիշատակին նուիրված երրորդ ներկայացմանը հայկական սեկցիան խաղաց «Քանդած օջախ» 3 գործ. կօմէդիան, ապրիլի 25-ին, Ժողովրդական Տանը։

Անմահ է այս պիէսը իր՝ ժողովրդական նաիվ, բայց առողջ փիլիսոփայութեան արտայայտութիւններով, տիպերի հարազատութեամբ։ Եւ Թիֆլիսի իրականութեան մէջ դուք դեռ այսօր էլ կը գտնէք նման տիպեր, և որչափ էլ նրանք քիչ լինեն, այնու ամենայնիւ դեռ կան, ապրում են։

Խաղի մասին պիտի ասենք, որ նա անհամեմատ աւելի թոյլ տարվեց քան անցեալ անգամ խաղացված «Խաթաբալան»։ Ներկայ պիէսի ամենապատասխանատու դերը Արաքսեանի փոխարէն կատարեց Տէր-Առաքելեան, որը Օսէփի տիպին երբեմն տալիս էր ինքնագոհ, կեանքի մէջ յաղթական մարդու կերպարանք, մինչդեռ գիտենք, որ Օսէփի տիպը բոլորովին ակնարկածի հակառակը պիտի լինի։ Սակայն պէտք է ասել, որ նրան երբեմն, նուազ չափով, աջողվում էր Օսէփի ոգու թելադրանքները ըմբռնել։

Տիկ. Յասմիկը այնպէս էր ըմբռնել Սալօմէի դերը, որ երբեմն կարծում էիր թէ ինքը պիտի նշանվէր Ալէքսանդր Մարմարօվի հետ և ոչ թէ իր դուստր Նատօն։

Տիկ. Մանուչարեանին անհրաժեշտ էր մի քիչ աւելի աշխուժութիւն. ցոյց չը տալով այդ անհրաժեշտ չափով, նրա Նատալիա Օսիպօվնան անհրաժեշտ տպաւորութիւնը չը գործեց։

Լաւ էր տիկ. Արաքսեանի Խախօն, բայց պէտք էր խուսափէր չափազանց լալկան տոնից և յաճախակի հասարակութեանը անտեղի կերպով նայելուց։ Գրիգորեանը (Գէվօ) ապարդիւն և անկարևոր տեղը գլուխը շարժելուց և ընդփոյթ Օսէփին ձեռք տալուց զատ, ուրիշ ոչինչ չը տուեց հանդիսականներին, միանգամայն փչացնելով միամիտ և ազնուասիրտ Գէվօյի դերը։

Տէր-Յովհաննիսեանի Ալ. Մարմարօվը թոյլ էր։

Տէր-Գրիգորեանը Փարսեղի դերը իր ամբողջ էութեամբ չը պատկերացրեց, մինչդեռ նա ձեռնհաս է Լէպրօինց Փասօյի, այդ ազրուկի, չարչիի, «անհոգի ու անաստուծ» վաշխառուի տիպը իր իսկական, հարազատ գոյներով պատկերացնելու։

Տիկ. Ս.-Վարդիթեր բաւարար տպաւորութիւն կը գործէր Քալիի դերում, եթէ երբեմն-երբեմն իր շարժ ու ձևերը և խօսակցութեան տոնը չափազանցութեան չը հասցնէր։ Փիրումեանի Գիժ-Մօսիին պակասում էր աւիւն, կենդանութիւն։

Պօղոսեանը (Դարչօ) «լաւ ուստի աշկերտ չէր»։ Սերժը (Միխօ) թոյլ էր։

Լօտօ խաղացող կանանցից մէկի «խաղը» և լօտօյի թւերը կարդալու իմիտացիան և ինտօնացիան լաւ էր։

Անձրևային եղանակի պատճառով թատրոնի դահլիճը կիսով չափ դատարկ էր։ Ներկայացումը փոխանակ նշանակված 8½ ժամին սկսվելու, սկսվեց ժամը 9-ից բաւական անց, որով և վերջացաւ ուշ։ Միջարարները չափազանց երկար են տևում, որ անցանկալի է։ А.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 25 ապրիլի

Խնդրեմ բարեհաճել տպել հետևեալը։

Մի քանի ժամանակ առաջ ես ստացայ Սարիղամիշից՝ Տաճատ ք. Տէր-Վարդանեանի, Ղ. Տէր-Խաչատրեանի, Մանկասար Յակոբեանի, Կ. Մալխասեանի, Ս. Մխչեանի և Գ. Բաղդեանի ստորագրութեամբ հետևեալ նամակը։

«Ինչպէս շատերին, հաւանական է ձեզ նոյնպէս յայտնի կը լինի ճարտարապետ Թօրամանեանի տասնամեայ տաժանելի աշխատութիւնները, կատարված տակաւին անծանօթ և անմշակ մի աշխատութեան շուրջ, որը կոչված է մի օր մեր անցեալ փառքը և ներկայ սերունդի պարծանքը լինելու։ Մենք այս արդար համոզմունքը կազմած ենք այն օրից, երբ կայսերական գիտական գեղարուեստ. բարձրագոյն հիմնարկութիւնները ի լուր աշխարհի ներբողեցին այդ համեստ աշխատաւորի անզուգական վաստակները, իսկ մեզ բաժին թողեցին նրան խրախուսելու և քաջալերելու վսեմ պարտականութիւնը։ Անշուշտ մամուլի միջոցով ծանօթացած կը լինէք, թէ նոյն աշխատութիւններից աննշան մի մասի հրատարակութիւնն Եւրօպայի մէջ ինչ ընդունելութիւն գտաւ և ինչպէս Վիէննայի գիտութեանց ճեմարանի գիտական ուսուցչապետ Ստշիգօվսկիի կողմից հրապարակային շնորհաւորութեան արժանացաւ։

«Ցաւօք սրտի պէտք է յայտնենք, որ մեր համայն ցեղիս պատւաբեր նոյն աշխատութիւնները դեռ անցեալ տարվանից դադարած են և, ինչպէս կը տեղեկանանք, այս տարի ևս նիւթական անձկութեան պատճառով դադարման վիճակի մէջ են գտնվում։

«Անկասկած մեր ազգային բազմահոգս և տարաբաղդ իրականութիւնն է, որ յաճախ կարևորն ու անյետաձգելին մոռացնել կը տայ, որի հետևանքով անգործունէութեան և յուսահատութեան կը մատնվեն Թօրամանեանի նման եզական գործիչները։ Ի հարկէ, մենք ի նկատի չունենք Թօրամանեանի անձնաւորութիւնը. մեզ համար ամենակարևորը նրա աշխատութեանց արդիւնքն է, որը մեր ներկայի և ապագայի սեփականութիւնն է։ Թօրամանեանին անգործութեան դատապարտելով մենք պիտի զրկվենք անգնահատելի գիտական մի սեփականութիւնից՝ միևնոյն ժամանակ ապագայ սերունդն էլ զրկելով նոյն պանծալի ժառանգութիւնից։ Ո՞ւմ յայտնի չէ, որ մինչև օրս մենք չենք ունեցել նոյնքան անձնազոհութեամբ աշխատողներ և գէթ մօտ ապագայում ունենալու յոյս էլ չը կայ. բնականաբար պէտք է, որ մենք գիտենանք օգտվել մի այդպիսի անխոնջ աշխատաւորի պատահական գոյութիւնից։

«Ահաւասիկ այս զգացումներով և այսօրինակ դատողութեամբ, հակառակ մեր համեստ կացութեան, ձեռնարկեցինք մի ծրագիր, այն է՝ ապահովել Թօրամանեանի գոնէ մի երկու տարվայ գիտական հետազօտութեանց անհրաժեշտ պէտքերը։

«Բնականաբար մեր չափից շատ վեր էր այս մեծ գործի համար մտածելն իսկ, ուստի մեր փոքրիկներիս լուման (մի հարիւր րուբլի) այսօր փոխադրում ենք ձեզ, թախանձելով որ շնորհ անէք աւելի արդիւնաւորել այն՝ քաջալերելու համար հայրենի գիտութեանց սիրով տառապող գործիչ Թօրամանեանին և ուրախացնել մեզ՝ ի սրտէ բոլոր համակիրներիս»։

Ուղարկելով յարգելի խմբագրութեանդ այս 100 րուբլին (որ նուիրել են Տ. ք. Տէր-Վարդանեան 10 ր., Ղ. Տէր-Խաչատրեան 25 ր., Գ. Բաղդեան 10 ր., Վ. Քիլ. 15 ր., Եղբարք Մխչեանց 15 ր., Ս. Մուրադեան 10 ր., Կ. Մալխասեանց 10 ր. և Մ. Յակոբեան 5 ր.), ես յոյս եմ տածում, որ Սարիղամիշի ազգայինների առաջարկն արձագանք կը գտնէ հայ հասարակութեան մէջ և խմբագրութիւնդ ևս կը բարեհաճի ընդունել յօժարակամ նուէրներն ու գործադրել նպատակին։

Ալէքսանդր Խատիսեան

Ծան. Խմբ.—«Մշակի» խմբագրութիւնը, խրախուսանքի արժանի գտնելով ճարտարապետ Թօրամանեանի աշխատութիւնները, հաճութեամբ կընդունէ յօժարակամ նուէրներն այդ նպատակով։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Լօնդօնում իտալական նաւատորմի նոր գործողութիւնների, և մասնաւորապէս Ռօդոսը գրաւելու տեղեկութիւնը սենսացիա առաջ բերեց։ Լրագիրները լոյս ընծայեցին յատուկ յաւելուածներ։ Հարցը քննվում է ոգևորութեամբ։ Ընդհանուրի կարծիքով դէպքերը պէտք է առաջ բերեն մեծ պետութիւնների միջամտութիւնը, որովհետև Ռօդոսի գրաւումը հանդիսանում է օսմ. պետութեան բաժանման նախերգանք։

◆ Ռուսաց դիպլօմատիական շրջաններում ստացված ստոյգ տեղեկութիւնների համաձայն, երբ Ռուսաստանը պահանջէ Բ. Դռնից իր վնասների հատուցումը, ոչ մինը մեծ պետութիւններից չը պէտք է պաշտպանէ Ռուսաստանին։

◆ Մայրաքաղաքի թերթերում մանրամասն բերված են քննիչ Լըժինի բացատրութիւնները Դաշնակցութեան գործում երևան հանված խարդախութիւնների ու կեղծիքների առիթով։

◆ «Б. В.» հաղորդում է, որ Պետական Դումայի նստաշրջանը կաւարտվի յունիսի 2-ին կամ 4-ին։ Պետական Խորհուրդը կը շարունակէ իր զբաղմունքները մինչև յունիսի վերջը, մինչև որ կը վերջացնէ բոլոր այն կարևոր օրինագծերի քննութիւնը, որոնք անհրաժեշտ են կառավարութեան համար։

◆ Մայիսի 1-ից ֆինլանդական նոր սենատօրների ընտրութեան ժամանակ շատերը նրանցից փոխարինվելու են նշանակովի ռուս պաշտօնեաներով։

◆ Գեներալ Կուրլօվի գործը քննվելու է Պետերբուրգում սենատի առաջին դեպարտամենտում մայիսի առաջին կէսերին։

◆ Սև-ծովի երկաթուղին սկսվելու է Տուապսէից և միանալու է Անդրկովկասեան երկաթուղիների հետ։ Գիծը ունենալու է 322 վերստ տարածութիւն և արժենալու է 55 միլիօն րուբլի։

◆ Ինչպէս ասում են, ռուսաց զինւորական մինիստր գեներալ Սուխօմլինօվը մնալու է իր պաշտօնում։

◆ Հնդկաստանից Լօնդօն հեռագրում են, որ այնտեղ տեղի են ունենում միտինգներ, ուր մահմեդականները բողոքում են ռուսների ձեռքով Մէշէդի մզկիթը ռմբակոծելու դէմ։

◆ Չինաստանում միապետական շարժումը աճում է։

◆ Դրութիւնը Մարօկկօյում բարդանում է և լուրջ կերպարանք ստանում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
25 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետ. Խորհուրդն ընդունեց բանւորներին դժբաղդ դէպքերից ապահովագրող օրինագիծը։

ՏԱԳԱՆՐՈԳ։ Մակեևկայի շրջանի Բերեստովօ-Բօգօդուխօվի հանքում ոստիկանութիւնը շրջապատելով այն տունը, որի մէջ թագնվել էին Տագանրօգի գաւառի աւազակութիւնների մասնակիցները, հանդիպեց գնդակների։ Կանչվեցին կօզակներ։ Հրացանաձգութիւնը տևեց երկու ժամ։ Վիրաւորվեցին երկու ոստիկան, սպանվեցին երկու յանցագործ, տանտիրուհին, տան աշխատաւոր կինը և մի բանւոր։

ՀԱՄԲՈՒՐԳ։ Բլումֆօս նաւաշինարանի բանւորները աշխատանքները վերսկսեցին նախկին պայմաններով։

ՊՐԱԳԱ։ «Մատիցա Շկօլսկայի» հաշւետւութիւնից երևաց, որ անցեալ տարի յօժարակամ նուիրատւութիւնները եղել են մի միլիօն կռօնից աւելի։

ԲԱՆԿՕԿ։ Զինւորական դատարանը 91 հոգու մեղաւոր գտաւ Սիամի թագաւորի կեանքի դէմ դաւադրութիւն կազմակերպելու մէջ։ Երեք օֆիցեր դատապարտվեցին մահվան պատժի, 20 հոգի ցմահ, 68 կարճ ժամանակներով բանտարկութեան, Թագաւորը մահապատիժը փոխարինեց ցմահ ու 25 տարով բանտարկութեամբ։

ՏՕԿԻՕ։ Խօկկայդօյում փոթորիկը ջր[illegible] է 30 ձկնորսական նաւակ։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

№4870.
ALBERT SACHS'S SCHUH-CREAM
BRISTOL

ПРЕДОСТЕРЕЖЕНИЕ
ԽՈՅՍՐ
աջողութիւն
կօշի կրէմ «ԲՐԻՍՕԼԻ»
[illegible]
ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ։
[illegible] միայն՝ № 4870.
ԱԼԲԵՐՏ ԶԱԿՍ
Գործարանը՝ СПБ. Англ. пр., 46
Тел. 521—07.
Հատուած. խանութը՝ Казанская, 6.
Тел. 464—92.
Ծախվում է ամենայն դեղատն. և կօշկակարների խանութներում։
(П. 61879) 7—1

МИ ՇԱՏ ՉՔԱՒՈՐ ՀԱՅՈՒՀԻ
իր զաւակների օրվայ պարէնը հայթայթելու համար
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
կարելու պատուէրներ,
որ կատարում է շատ մաքուր և տրված օրինակի համաձայն։
Հասցէն՝ Սուրբ-Կարապետի վերևը, № 15.
Սօֆիա Գրիգորեանց։
(Հ.) 283. 2—1

Հրաւէր

Հանգուցեալ Շմաւոն քահ. Տէր-Բաբուեանի տեղ ձեռնադրվելով, կիրակի, ապրիլի 29-ին, առաւօտեան ժամը 10-ին Հաւլաբարի Կարմիր Աւետարանի (Շամքորեցոց) եկեղեցում մատուցանելու եմ իմ անդրանիկ պատարագը, ուստի խնդրում եմ վերոյիշեալ եկեղեցու յարգելի ծխականներին շնորհ բերել եկեղեցի ներկայ լինելու պատարագին։
Նորընծայ Սարգիս ք. Աւետիքեան
(Կ.) 284. 2—1

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1) ԴՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	գ. 1 ր.	—
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժնի, I և II հատորներ	1 ր.	50 կ.
3) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի	—	50 կ.
4) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ Քամալեանց Ս.-ի.	—	50 կ.
5) ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի	1 ր.	—
6) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի	—	40 կ.
7) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, Թարգմ. Արշակ Սաֆարեանի	1 ր.	50 կ.
8) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, Թարգմ. գերմ. Իս. Յարութիւնեանի,	—	50 կ.
9) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտական վէպ Կամիլ Ֆլամարիոնի. Թ. Հ. Առաքելեանի	1 ր.	50 կ.
10) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր.	20 կ.
11) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արք. Մխիթարեանի	—	40 կ.
12) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդօյի, Թարգմ. Հ. Առաքելեանի	—	60 կ.
13) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկ. Գ. Բաբեանի		
I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն	1 ր.	—
II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան	1 ր.	60
14) ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, բժ. Ա. Բուդաղեանի	—	5
15) ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ խօլերայի մասին, բժ. Վ. Արծրունու	—	15
16) ՋԵՌՆ ԱՌԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանաստեղծութեան, Հ. Առաքելեանի	—	50 կ.
17) ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՅՈՒԿՆԵՐԸ, Հ. Իբսէնի, Թարգմ. Լ. Բաբայեանի	—	50 կ.
18) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, Թարգմ. Հ. Առաքելեանի	1 ր.	—
19) ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔՈՒՄ, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք.-ի	—	40 կ.
20) ՆՇԱՆՎԱԾՆԵՐ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի	—	60 կ.
21) ԷԳՄՕՆՏ, ողբերգ. 5 գործ. Վ. Գ. Գէօթէի, Թարգմ. Հմ. Մաժինեանի	—	50 կ.
22) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ, Լ. Ն. Տօլստօյի, Թարգմ. Սուրխաթեանի	—	30 կ.
23) ԿՕՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), Լ. Ն. Տօլստօյի խմբագրութեամբ կազմեց Ա. Բուլանժէ, Թարգմ. Սուրխաթեանի	—	7 կ.
24) ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՄԱՀՕՄԷԴԻ, ընտրված Լ. Տօլստօյի, Թ. Լ. Դանիէլեանի	—	5 կ.
25) ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԷԿ Է, Լ. Տօլստօյի, Թարգմ. Լ. Դանիէլեանի	—	5 կ.
26) ՔՈՅՐԵՐԸ, Լ. Տօլստօյի, Թարգմ. Լ. Դանիէլեանի		5 կ.
27) ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Լ. Տօլստօյի, Թարգմ. Լ. Դանիէլեանի	—	10 կ.
28) ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պետրոս Ադամեանի	1 ր.	40
29) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	—	20
30) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (կենսագրութիւն), Ստ. Մալխասեանցի	—	35
31) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	—	15
32) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	—	25
33) ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ, Ե. վ. Տէր-Մինասեանի	—	15
34) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի	—	25
35) ՃԱՊՕՆԻԱ կամ ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի	—	30
36) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	—	25
37) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	—	80 կ.
38) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՇԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուտարեանի	—	

Նրանք, որոնք կը գիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից 5 րուբլուց բարձր գումարի՝ կը ստանան 25% զեղչ։ 10 ր. բարձր գումարի պատուէր տուողներն ստանում են 30% զեղչ։

«Մշակի» բաժանորդներից նրանք, որոնք վերոյիշեալ բոլոր գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն, կը ստանան 40% զեղչ։

ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ։

50—17

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.